

Կոմանդոսն առաջարկում է կանխարգելիչ հարված հասցնել Ադրբեջանի դիրքերին



Եկել է ժամանակը, որպեսզի հայկական կողմը հասկանա՝ որքան ուժեղ է եւ չսպասի իր վրա հարձակվելուն, այլ ինքը հարված հասցնի Ադրբեջանին:

«Մենք կանխարգելիչ հարված հասցնելու հիանալի պայմաններ ունենք: Այս գաղափարը չի ողջունվում, այն մարդկային կյանքերի հետ է կապված, սակայն մենք չենք կարող թույլ տալ, որ մեզ վրա հարձակվեն, մենք էլ ամբողջ ժամանակ պաշտպանվենք: Եթե մենք հարված չհասցնենք, ադրբեջանական կողմն անընդհատ լարվածության մեջ կպահի մեզ», Կոմանդոսը բացատրել է, որ խոսքը պատերազմական գործողություններ սկսելու մասին չէ, այլ կանխարգելիչ հարվածներ հասցնելու: «Ադրբեջանական զորքերը պատրաստ չեն ռազմական գործողությունների, նման զնահատական ՆԱՏՕ-ի մասնագետներն են տալիս: :

Այս համարում

Հայերեն բաժին

| | |
|----------------------------|----|
| 1- Իրանահայ Համայնք..... | 1 |
| 2- Հայաստան..... | 2 |
| 3- Արցախ..... | 8 |
| 4- Արեւմտյան Հայաստան..... | 12 |
| 5- Միջազգային..... | 15 |
| 6- Հասարակական..... | 17 |
| 7- Խոհեր..... | 19 |
| 8- Գծանկարչություն..... | 20 |
| 9- Առածանի..... | 20 |

Պարսկերեն բաժին

| | |
|----------------|-----|
| 1- Լուրեր..... | 1-4 |
|----------------|-----|



Ճապիկի առաջին էջում՝ Կոմանդոսի պատգամը

Վերջին էջում՝ Լույս են տեսել Էդ. Բաղդասարյանի նոր գրքերը

Համար 190, Օգոստոս 2014 թ.

No. 190, August 2014

ماهنامه لویس - شماره ۱۹۰ شهریور ماه ۱۳۹۳

ԼՈՒՅՍ

Մշակութային եւ հասարակական ամսագիր

Արտոնատեր եւ գլխավոր խմբագիր՝

Էդ. Բաղդասարյան

Փոստարկը 15875-9488 Թեհրան - Իրան

Էլեկտրոնային փոստ՝ louys_monthly@yahoo.com

Ինտերնետային հասցեն՝ www.louysonline.com

LOUYS

Armenian Cultural and Social Monthly

License-holder and Editor-in-Chief

Ed. Baghdasarian

www.Edic-Baghdasarian.com

POBox 15875-9488 Tehran – Iran

E-mail : louys_monthly@yahoo.com

Internet : www.louysonline.com

Թերթի Գինը՝ Հատվածառ - 5000 ռիալ
Բաժանորդագրություն՝

Իրան՝ մեկ տարի՝ 60,000 ռիալ

Արտասահման՝ մեկ տարի՝ 50 ԱՄՆ դոլար

Հոդվածների հեղինակների կարծիքները կարող են

չհամընկնել խմբագրության տեսակետներին:

Արտատպության դեպքում հղումը «ԼՈՒՅՍ» - ին

պարտադիր է:

Կալիֆորնիայի Սենատը ճանաչեց ԼՂՀ անկախությունը



Կալիֆորնիայի նահանգային Սենատն ընդունել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության եւ ինքնորոշման մասին բանաձեւը:

Քվեարկված բանաձեւը նաեւ կոչ է անում ԱՄՆ-ին՝ ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը՝ ազդարարելով, որ ամերիկյան ժողովուրդն աջակցում է անկախ եւ պատմականորեն հայկական այս երկրի քաղաքացիների ազգային եւ ժողովրդավարական ձգտումները:

Պատմական այս քվեարկությունը, մասնավորապես, քաջալերում է Արցախի շարունակական ջանքերը՝ որպես ազատ եւ անկախ պետություն զարգանալու ճանապարհին, եւ պաշտոնապես կոչ է անում ԱՄՆ նախագահին եւ Կոնգրեսին՝ աջակցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ինքնորոշմանն ու ժողովրդավարական անկախությանը:

Իրանահայ Համայնք

**Կյանքից հեռացավ
Ժանետ Լազարյանը**



Իրանահայեր.

Յավով տեղեկացանք, որ սույն թվականի օգոստոսի 25-ին, երկարատե հիվանդությունից հետո կյանքից հեռացավ իրանահայ անվանի արվեստագետ եւ լրագրող Ժանետ Լազարյանը:

Օգոստոսի 29-ին, մի խումբ հայ եւ պարսիկ մտավորականների, ընտանեկան պարագաների եւ հարազատների կողմից, Թեհրանի հայոց բուրաստանում վերջին հրաժեշտից հետո, հողին հանձնվեց իրանահայ անվանի արվեստագետ, վաստակավոր լրագրող, «Լազար» արտ-մոդեռն թանգարան ցուցահանդեսի հիմնադիր, «Իրանահայոց հանրագիտարան» գրքի կազմող Ժանետ Լազարյանի դին, ում հուղարկավորությունը կատարվեց Հայ կաթողիկե եկեղեցու վարդապետ Հայր Միսնի միջոցով:

Ժանետ Լազարյանը ծնվել է 1940 թվականին, Թեհրանում, Նախիջեւանից գաղթած ընտանիքում: Նախնական կրթությունն ստացել է Թեհրանում եւ Մպահանում, ապա բարձրագույն ուսումը շարունակել Լոնդոնի թագավորական «Ռոյալ քոլեջ»-ի արվեստի պատմության բաժնում:

Վերադառնալով ծննդավայր աշխատել է որպես լրագրող: Ավելի ուշ հիմնել է արվեստի պատկերասրահ, որտեղ իրենց աշխատանքները ներկայացնելու հնարավորություն են ունեցել ոչ միայն իրանահայ, այլ նաեւ բոլոր իրանցի արվեստագետներն ու նկարիչները:

Նա տասը տարի աշխատել է Իրանի նավթային ընկերությունում, նույն ժամանակ աշխատակցել է «Ֆերդովսի» ամսագրի եւ «Էթելասթ» օրաթերթի հետ: Ավելի ուշ աշխատանքի է անցել «Թեհրան ժուռնալ» անգլիատառ օրաթերթում, որպես արվեստի բաժնի պատասխանատու:

Իսլամական հեղափոխության հաղթանակից հետո, որպես ազատ լրագրող աշխատել է «Դոնյայե տղխան», «Բոխարա» եւ «Թավուս» պարսկերեն

ամսագրերում, ինչպես նաեւ «Թեհրան թայմս» եւ «Իրան նյուզ» անգլիատառ օրաթերթերում:

70-ականներին հայտնի հայ ռեժիսոր Սերգեյ Փարաջանովի ազատագրկումից հետո, այդ մասին Լազարյանը բարձրաձայնել է տարբեր կինոփառատոններում:

Իր լրագրողական գործունեության ընթացքում Ժանետ Լազարյանը հարցազրույցներ է վարել Վիլյամ Սարոյանի, Քեթի Բերբերյանի, Ջուբին Մեհթայի, Հերբերտ Ֆոն Կարայանի, Արամ Խաչատրյանի, Անն Բաբաջանյանի, Էմիլի Գիլսի, Փիթեր Բրուքի, ԻԻՀ-ում ՀՀ անդրանիկ դեսպան պրոֆ. Վահան Բայբորոյանի եւ այլոց հետ:

2002 թվականին ԻԻՀ նախագահ Մոհամադ Խաթամիի հիմնած «Քաղաքակրթությունների երկխոսություն» կազմակերպության կողմից հրատարակվեց Ժանետ Լազարյանի պարսկերենով կազմած «Իրանահայոց հանրագիտարան»-ը, որը վերահրատարակվեց 2009-ին: Իսկ 2012-ին ՀՀ Մշակույթի նախարարության եւ ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության Մշակույթի կենտրոնի աջակցությամբ հրատարակվեց նույն գրքի հայերեն տարբերակը:

Ժանետ Լազարյանը մեծ դեր է խաղացել Իրան-Հայաստան մշակութային կապերի ընդլայնման մեջ: Նրա ջանքերի շնորհիվ 2001 թվականին Իրանի Ժամանակակից արվեստի թանգարանում կայացել է Հայաստանի մերօրյա նկարիչների գործերի ցուցահանդես: Իսկ 2004 թ. ՀՀ ազգային պատկերասրահում կազմակերպվել է Իրանի երեք սերնդի նկարիչների ստեղծագործությունների ցուցահանդես: 2008թ. նույն սրահում կազմակերպվել է Ղաջարական ժամանակաշրջանի գեղանկարչության ցուցահանդես:

Մշակութային անխոնջ գործունեության համար Ժանետ Լազարյանը արժանացել է պետական եւ ոչպետական կառույցների տասնյակ շնորհակալագրերի եւ գնահատագրերի:

Ժանետ Լազարյանի վերջին հրաժեշտին շատերն էին բացակայում...:

«Լույսի» խմբագրությունը խորպես վշտակցում է նրա վախճանման առիթով:

**«Հայոց լեզվի եւ գրականության ամբիոնը
ազգային կապիտալ է, չի կարելի անտարբեր
վերաբերվել նրան»**

Arax news 12/08/2014

Օգոստոսի 10-ին, Թեհրանի Իսլամական ազատ համալսարանի (ԻԱՀ), Օտար լեզուների ֆակուլտետի, Հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ եւ դասախոս դոկտ. Անդրանիկ Միսնյանը իրանահայ մամուլի ներկայացուցիչներին հրավիրել էր համալսարան մտնելու ծանոթանալու ամբիոնի ու նրա առջև ծառայած դժվարությունների հետ:

Հանդիպման սկզբում Միսնյանը շնորհակալություն հայտնեց մամուլի ներկայացուցիչներին՝ հրավերն ընդառաջելու համար, ապա ամփոփ կերպով տվեց ամբիոնի պատմությունը:

«Ամբիոնը հիմնադրվել է 1995 թվականին, Երևանի «Հրաչյա Աճառյան» համալսարանի հետ ստորագրված փոխադարձ համաձայնությամբ, Թեհրանում՝ հայերեն, Երևանում՝ պարսկերեն լեզվի եւ գրականության ամբիոն հիմնելու նպատակով: Անցած 19 տարիների ընթացքում ամբիոնը տվել է 420 շրջանավարտ, իսկ այս տարեշրջանում ունի յոթը ուսանող»,- ասաց նա, ապա անուն առ անուն հիշեց ամբիոնում դասավանդվող առարկաներն ու նրանց դասախոսներին



- Քերականություն, ձևաբանություն եւ շարահյուսություն՝ պրն. Հրայր Շահնագարյան,
- Հայ ժողովրդի պատմություն, Իրանի հայ համայնքի պատմություն՝ դոկտ. Կարեն Խանլարյան,
- Բանահյուսություն, Գրաբար, Ուղղագրություն եւ թելադրություն՝ տկն. Քարմեն Ազարյան,
- Գրականության տեսություն, Միջազգային գրականություն, Ոճաբանություն եւ Գրաքննադատություն՝ Նորայր Միքայելյան,
- Հայ ժողովրդի պատմություն եւ Իրանի մշակույթի պատմություն՝ օր. Արփի Մանուկյան,
- Լեզվաբանություն, Հայերեն դասական եւ արդի գրականություն, Հայոց լեզվի պատմություն՝ դոկտ. Անդրանիկ Միմոնյան:

Նա ամբիոնը համայնքի գանձերից մեկը համարելով, ասաց. «Այս ամբիոնը պիտի բոլորի տունը լինի, այստեղ գաղափարական հարցեր չկան: Սա ազգային կապիտալ է, չի կարելի անտարբեր վերաբերվել, ավստոս է: Այս լացը ո՞ւմ մոտ լացենք»: Նա դժգոհելով ուսանողներին ֆինանսավորող մարմիններից նշեց, որ հույսով ենք նրանք հարցի կարեւորությունն զգալով ամեն ինչ կանեն ամբիոնի ապագան երաշխավորելու համար: Նա կոչ արեց ամուր ձեռքերով պահել ամբիոնը, հասուն ֆոնդ կազմակերպել ուսանողներին օժանդակելու եւ ավելի շահագրգռելու, որպեսզի ավելի շատ ուսանողներ ամբիոն մուտք գործեն եւ վաղվա ուսուցիչն ու դաստիարակը լինեն ավելի կրթված, ավելի պատրաստված»: Հանդիպման ավարտին մամուլի ներկայացուցիչները այցելեցին նաև ԻԱՀ Օտար լեզուների ֆակուլտետի նախագահ դոկտ. Մոհամադ Զիարին, ով ջերմ դիմավորելուց հետո, ասաց, որ ինքը մեծ հարգանքով է վերաբերում հայ ժողովրդին: Նա հավելեց. «Հայոց լեզվի եւ գրականության ամբիոնը դժվար օրերից հետո դոկտ. Անդրանիկ Միմոնյանի շնորհիվ, նոր շունչ է առել եւ հույս ունենք գնալով ավելի կեդրոնա՝ Դոկտ. Զիարին ի միջի այլոց նշեց, որ «Մտածում եմ առաջիկա սպրիլ ամսվա ընթացքում մի ցուցահանդես կազմակերպել համալսարանի տարածքում՝ «Հայ մշակույթի օրեր» անվան ներքո եւ սպասում ենք, որ մեր հայ բարեկամները իրենց զգալի դերը կունենան դրանում»:

Հայաստան

Կյանքից հեռացել է բանաստեղծուհի Մետաքսեն



Հայաստանի մշակույթի նախարարությունը խոր վշտով տեղեկացնում է, որ ս. թ. օգոստոսի 10-ին, կյանքի 88-րդ տարում վախճանվել է բանաստեղծ, թարգմանիչ, ՀՀ Մովսես Խորենացի մեդալակիր, Հայաստանի գրողների միության անդամ Մետաքսեն (Մետաքսե Պողոսյան):

Մետաքսեի մահվան կապակցությամբ ՀՀ վարչապետի որոշմամբ ստեղծվեց թաղման կառավարական հանձնաժողով:

«Լույսի» խմբագրությունը խորապես վշտակցում է նրա վախճանման առիթով:

Աշխատանքային խմբի ղեկավար Կարեն Պետրոսյանի մահը ռազմական հանցագործություն է



Հայաստանի Չինարի գյուղի բնակիչ Կարեն Պետրոսյանի մահն ադրբեջանական զնդանում եւս մեկ ռազմական հանցագործություն է: Այդ մասին հայտարարել Գերիների, պատանդների եւ անհետ կորածների հանձնաժողովի աշխատանքային խմբի ղեկավար Արմեն Կապրիելյանը NEWS.am-ի թղթակցի խնդրանքով մեկնաբանելով նախօրեին գերված Կարեն Պետրոսյանի ողբերգական մահը:

«Խորին ցավով ընդունեցինք Հայաստանի քաղաքացի Կարեն Պետրոսյանի մահվան մասին լուրը: Ցավոք, սա հայ գերու կամ պատանդի մահվան առաջին դեպքը չէ ադրբեջանական գերությունում, եւ ամենն ադրբեջանցի ռազմական հանցագործների անպատժելիությունն է, որոնք ոտնահարում են միջազգային հումանիտար իրավունքի տարրական նորմերը եւ մարդու իրավունքներն առհասարակ:

Հայաստանի հանձնաժողովը պահանջում է Կարեն Պետրոսյանի մահվան անաչառ քննություն



Հայաստանի գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովը պաշտոնական հայտարարություն է տարածել Ադրբեջանում հայ գերու մահվան կասկածելիությամբ:

«Մ.թ. օգոստոսի 8-ին Կարմիր Խաչի Միջազգային կոմիտեի հայաստանյան պատվիրակությունը պաշտոնապես հաստատել է Ադրբեջանի իշխանությունների հաղորդագրությունը ս.թ. օգոստոսի 7-ից ադրբեջանական գերության մեջ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացի Կարեն Պետրոսյանի մահվան վերաբերյալ:

ՀՀ Տավուշի մարզի Չինարի գյուղի բնակիչ Կարեն Պետրոսյանը ս.թ. օգոստոսի 7-ին, դեռեւս չյարգված հանգամանքներում, հատել էր հայ-ադրբեջանական պետական սահմանը եւ հայտնվել ադրբեջանական գերության մեջ: Չնայած ադրբեջանական իշխանությունների զանազան մեկնաբանություններին, ՀՀ պաշտպանության նախարարությունը պաշտոնապես հայտարարել է, որ Կարեն Պետրոսյանը չի հանդիսանում ՀՀ ՁՈՒ գինձառայող:

Կ.Պետրոսյանի հարազատների հավաստմամբ, ինչպես նաեւ նրա բժշկական փաստաթղթերի համաձայն, վերջինս առողջական խնդիրներ, առավել եւս սրտանոթային հիվանդություններ չի ունեցել եւ եղել է փաստացի առողջ:

Ադրբեջանական կողմը, չբավարարվելով գերեվարված ՀՀ քաղաքացու նկատմամբ կիրառված ակնհայտ անմարդկային վերաբերմունքով, ենթարկել է Կ. Պետրոսյանին նվաստացումների, տանջանքների եւ կտտանքների՝ հասցնելով նրան մահվան. այս ամենի սպագույցը ադրբեջանական լրատվամիջոցներով շրջանառվող տեսանյութերն ու լուսանկարներն են:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ չյարգված հանգամանքներում Կ.Պետրոսյանի անակնկալ մահը նրա հանդեպ դաժան ու

անմարդկային վերաբերմունքի հիմնավոր կասկածներ է ծնում, ինչը «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում» ամրագրված մարդու հիմնարար իրավունքների եւ ազատությունների կոպիտ ոտնահարում է: Ուստի ՀՀ գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովը պաշտոնապես պահանջում է անկախ միջազգային փորձագետների կողմից դիակի դատաբժշկական փորձաքննություն՝ մահվան պատճառները պարզելու համար:

ՀՀ գերիների, պատանդների եւ անհայտ կորածների հարցերով զբաղվող հանձնաժողովը համապատասխան միջազգային կառույցներին կոչ է անում դրսևերել հետեւողականություն՝ գործի անաչառ եւ լիարժեք քննություն իրականացնելու համար»,- նշել են հանձնաժողովից:

Ֆիննախ. Իրան-Հայաստան երկաթուղու բյուջեի 60%-ը կարելի է ստանալ Չինաստանից



Հայաստանի Հարավային երկաթուղու (Իրան-Հայաստան) շինարարության արժեքի 60%-ը կարելի է Չինաստանից ստանալ: Այս մասին ասված է երկաթուղու կառուցման հայեցակարգի վերաբերյալ Հայաստանի Ֆինանսների նախարարության եզրակացությունում: Շինարարության համար պատասխանատու է Տրանսպորտի նախարարությունը:

Նախագծա-հաշվարկային փաստաթղթերի համաձայն՝ երկաթուղու կառուցման համար 3 մլրդ 207 մլն դոլարի ներդրում է անհրաժեշտ՝ առանց հաշվի առնելու հողատարածքների գնումն ու դրանց սեփականատերերի վերաբնակեցումը, ինչպես նաեւ սարքավորումների եւ աշխատողների համար նախատեսված հարկերն եւ մաքսատուրքերը:

Նախագծի արժեքի 60%-ը կարելի է ստանալ Չինաստանի Արտահանման-ներմուծման բանկից, տարեկան 3.5%-ով: Ծրագրվում է միջոցներ ներգրավել նաեւ տարածաշրջանի շահագրգիռ պետություններից: Ֆիննախոր նշում է, որ այդպիսի երկրների հետ (Իրան, Վրաստան, Ռուսաստան) հնարավոր համատեղ ֆինանսավորման շուրջ բանակցություններ դեռեւս չեն տարվում:

Վելի վաղ Հայաստանի ֆինանսների նախարարության «Երկաթուղու շինարարության տնօրինություն» ՊԲԲԸ-ի տնօրեն Աշոտ Շահնազարյանը NEWS.am-ին հայտարարել էր, որ երկաթուղու շինարարության ժամկետը 6 տարի է, ծախսաձածկումը՝ 28 տարի, շահագործումը՝ 50 տարի:

Աշխատանքների մեկնարկն ակնկալվում է 2015 թվականի առաջին կիսամյակում: Ծինարարության արժեքը կարող է կազմել շուրջ 3.5 մլրդ դոլար:

Ենթադրաբար Իրան-Հայաստան երկայնուղու հայկական հատվածի երկարությունը կազմելու է 316 կմ: Այն Իրանի հետ սահմանից (Մեդրի) հասնելու է Մեւանա լճից ոչ հեռու տեղակայված Գագարին քաղաք, որտեղ էլ միանալու է արդեն գործող երկայթզծին: Նախագծի ներդրողներն առայժմ ամբողջությամբ հստակեցված չեն:

Նախարար. Հայաստանում 4 տարում ցորենի բերքն ասավելացել է 85%-ով



Վերջին 4 տարում Հայաստանում ցորենի բերքն ասավելացել է 85%-ով: Այս մասին Գործադիրի օգոստոսի 14-ի նիստում ասել է գյուղնախարար Սերգո Կարապետյանը:

Ըստ նրա՝ եթե 2010թ. բերքը կազմել էր 183 հազար տոննա, ապա այս տարի սպասվում է 340 հազար տոննա:

4 տարում ավելացել է նաև միջին բերքատվությունը՝ մեկ հեկտարից հասնելով 21,2-ից մինչև 32 ցենտներ:

«Մինչև 2010թ. հատիկավորների ցանքատարածքները տարեցտարի կրճատվում էին, իսկ վերջին 4 տարում դրանք ավելացել են 29,3 հազար հեկտարով կամ 18%-ով», - նշել է նախարարը:

Սա հնարավոր է դարձել ի շնորհիվ Ռուսաստանից ներկրված եւ Հայաստանի կլիմային հարմարեցված սերմերը գյուղացիների շրջանում տարածելու ծրագրի շնորհիվ:

Արդյունքում սերմնարուծությունը սկսեց զարգանալ նաև Հայաստանում. այս տարիների ընթացքում հանրապետությունում ձեւավորվեցին 20-ից ավելի խոշոր մասնագիտացված գյուղացիական տնտեսություններ:

Al Jazeera-ն Եվրասիական միությանը Հայաստանի միանալու մասին ռեպորտաժ է պատրաստել

Al Jazeera հեռուստաընկերությունը ներկայացրել էրեւանում նկարահանված ռեպորտաժը՝ նվիրված Եվրասիական միությանը Հայաստանի անդամակցությանը:

Հայաստանի կառավարությունը կողմ է Եվրասիական միությանը անդամակցությանը, սակայն շատ հայեր մտահոգ են Եվրոպայից ներկրվող ապրանքների գների հնարավոր բարձրացմամբ:

Հեռուստաընկերության թղթակիցը գրուցում է ավտոդիլերի հետ, որի գնահատականներով, վերջինս կարող է կորցնել իր գնորդների 20%-ը: «Հայաստանի գլխավոր

խնդիրն այն է, որ եթե երկիրը ցանկանա միանալ Եվրասիական միությանը, ապա անհրաժեշտ կլինի վերակառուցել ամբողջ շուկան», - հաղորդում է թղթակիցը:

Թղթակիցը հիշեցնում է, որ Ռուսաստանը հայ աշխատանքային միգրանտների գլխավոր կենտրոնն է, ինչպես նաև, Հայաստանը Ադրբեջանի հետ չլուծված հակամարտության շրջանակներում մշտապես Ռուսաստանի կարիքն ունի: Այժմ անդամակցությունը հետաձգվել է, Հայաստանը դեռ կարող է բանակցություններ վարել անդամակցության պայմանների շուրջ: «Պետք չէ հեռու գնալ Հայաստանի եւ Ռուսաստանի պատմական եւ մշակութային կապը տեսնելու համար: Մաքսային միությունը այս կապերը էլ ավելի ամուր կդարձնի՝ անկախ այն բանից՝ տնտեսական տեսակետից այն իմաստ ունի՞, թե՞ ոչ»:

Սերժ Սարգսյանը Հովիկ Աբրահամյանի հետ քննարկել է եզդիների խնդիրը



Հայաստանը խորապես անհանգստացած է Իրաքի հյուսիսում եզդի բնակչության հանդեպ շարունակվող զանգվածային բռնությունների եւ դրա հետեւանքով բազմաթիվ մարդկային զոհերի փաստով:

Որեւէ ազգային եւ կրոնական փոքրամասնության եւ, մասնավորապես, Իրաքի եզդիների հանդեպ բռնության կիրառումը բացարձակապես անընդունելի է, եւ միջազգային հանրությունը պետք է անհապաղ քայլեր ձեռնարկի դրանք ժամ առաջ դադարեցնելու, տուժածներին աջակցություն ցուցաբերելու, մարդասիրական օգնություն տրամադրելու համար:

Նախագահի մամուլի քարտուղարի գրասենյակից հայտնում են, թե ՀՀ նախագահի կողմից հանձնարարականներ են տրվել արտգործնախարարությանը եւ դիվանագիտական առաքելությունների ղեկավարներին՝ միջազգային ասպարեզում խնդիրն պատշաճ մակարդակով հետամուտ լինելու իրենց ջանքերը կրկնապատկելու համար:

Սերժ Սարգսյանն այսօր ՀՀ վարչապետի հետ քննարկել է նաև Հայաստանի կողմից տրամադրվող մարդասիրական օգնության՝ նախապես ծրագրված ծավալներն ավելացնելու հարցը, ինչին ՀՀ կառավարությունը լուծում կտա առաջիկա օրերի ընթացքում:

Խնդիրը շարունակելու է մնալ պաշտոնական Երեւանի ուշադրության կենտրոնում, եւ Հայաստանի Հանրապետությունն իր ուժերի չափով հետեւողականորեն սատարելու է փորձության մեջ հայտնված բարեկամ եզդի ժողովրդին:

Բոստանջյան. Հայաստանի օլիգարխներին կարելի է սեղմել մեկ թուփում



Հայաստանի օլիգարխներին կարելի է սթափեցնել մեկ թուփում: Այս մասին օգոստոսի 18-ին լրագրողներին ասել է տնտեսագետ, նախկին պատգամավոր, ԲՀԿ անդամ Վարդան Բոստանջյանը:

Ըստ նրա՝ տնտեսական շահերի դեմ ուղղված օլիգարխների ներկայիս պահվածքը պայմանավորված է ոչ թե իրենց ուժով, այլ իշխանությունների անգործությամբ: «Ցանկացած երկրում, եթե պետությունը սեղմի օլիգարխներին, նրանց հետքն էլ չի մնա: Եթե նրանք գոյություն ունեն, հետևաբար, պետությունը թույլ է տալիս նրանց գոյություն ունենալ», - ընդգծել է տնտեսագետը: Բոստանջյանը նշել է, որ օլիգարխիան նվազեցնում է Հայաստանի մրցունակությունը՝ անկախ նրանից, թե ինտեգրացիոն որ բլոկում է ձգտում նա հայտնվել:

Սոցիոլոգ. Հայկական ընտանիքների 83%-ը՝ խորհրդային վերապրուկների իշխանության տակ



Հայկական ընտանիքների 83%-ը չեն ձերբազատվել խորհրդային մնացուկներից: Այս մասին օգոստոսի 18-ի մամուլի ասուլիսում հայտարարել է «Սոցիոմետր» սոցիոլոգիական կենտրոնի ղեկավար Ահարոն Ադիբեկյանը:

Ըստ նրա՝ միայն ընտանիքների 17%-ն է իր անձնական խնդրների եւ նպատակների լուծումը կապում ինքն իր եւ իր ակտիվության հետ: «Մնացածը հույսը դնում են

պետության վրա: Եվ դա նշանակում է, որ մենք դեռ չենք հասել իրական ժողովրդավարության: Քաղաքացիներն ամեն ինչ սպասում են պետությունից ավտորիտար վարչակարգի պայմաններում: Իսկ ժողովրդավարականի դեպքում իրենք պատասխանատվություն են զգում պետության համար, եւ հակառակը, շտապում են իրենք ինչ-որ բան տալ նրան», - նշել է Ադիբեկյանը:

Թուրքիա մեկնող հայաստանցիների թիվն աճում է



Թուրքիա մեկնած Հայաստանի քաղաքացիների թիվը 2014 թվականի հունվար-հունիս ամիսներին կազմել է 27 150 մարդ:

Ինչպես NEWS.am-ը տեղեկանում է Թուրքիայի մշակույթի եւ տուրիզմի նախարարությունից, 2014 թվականի հունվար- մայիս ամիսներին Թուրքիա այցելած հայաստանցիների թիվն աճել է 2,2 տոկոսով նախորդ տարվա նույն ժամանակատվածի համեմատ:

Միայն 2014-ի հունիսին Թուրքիա է մեկնել 6 424 Հայաստանի քաղաքացի, ինչը գրեթե 6 տոկոսով ավելին է նախորդ տարվա հունիսի համեմատ:

2014-ի հունիսին ամենամեծ աճը Թուրքիա այցելություններով գրանցել են Իսլամդիպի, Լյուքսեմբուրգի եւ Քուվեյթի քաղաքացիները՝ 256, 106 եւ 85 տոկոս աճով:

Հայաստանը ՄԱԿ-ում բարձրացրել է եզդիների հարցը, խոսել ադրբեջանական ագրեսիայից

Օգոստոսի 21-ին ՄԱԿ-ի ԱԽ-ում տեղի ունեցավ «Հակամարտությունների կանխարգելում. միջազգային խաղաղության եւ անվտանգության պահպանում» խորագրով բաց քննարկում, որին մասնակցեցին ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի-մունը, Մարդու իրավունքների գերագույն հանձնակատար Նավի Փիլայը, ինչպես նաեւ շուրջ վեց տասնյակ անդամ պետությունների ներկայացուցիչներ:

ԱԳՆ մամուլի ծառայությունից հայտնում են, թե նիստին երկույթով հանդես եկավ ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչ, դեսպան Չոհրաբ Մնացականյանը, ով գոհունակություն հայտնեց բաց քննարկման նախաձեռնման համար՝ կարելորելով հակամարտությունների կանխարգելման հարցում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի եւ ՄԻ գերագույն հանձնակատարի դերակատարությունը:

Հայաստանի դեսպանն ընդգծեց, որ Հայաստանն առանձնահատուկ կարևորում է քաղաքացիական հասարակության, մասնավորապես՝ հասարակական կազմակերպությունների դերակատարությունը վեճերի կանխարգելման գործընթացում փոխվստահության մթնոլորտի ձևավորման համար: Սակայն, նշված ջանքերը կարող են ապարդյուն լինել այն դեպքերում, երբ պետության ղեկավարությունը չի կարողանում ապահովել երկրում մարդու հիմնարար իրավունքները և ազատությունները:

«Հայաստանը խորապես հետաքրքրված է կանխարգելման արդյունավետ մեխանիզմի հաստատման խնդրով՝ լինի դա միջազգային կամ տարածաշրջանային մակարդակներով: Կանխարգելումը անհրաժեշտ է ոչ միայն հնարավոր հակամարտության ծագման, այլև իր վերջնական կարգավորումը չստացած հակամարտությունների դեպքում: Խոսքը վերաբերվում է նաև Լեռնային Ղարաբաղի հարցին, որի բնակչության ինքնորոշման իրավունքի իրագործման դեմ Ադրբեջանը սանձազերծեց լայնամասշտաբ պատերազմ՝ ոտնահարելով ՄԱԿ-ի կանոնադրությունը:

Վերջին շաբաթների ընթացքում աշխարհն ակնատես եղավ ԼՂ ու Ադրբեջանի միջև շփման գծի եւ հայաստանա-ադրբեջանական սահմանի ամբողջ երկայնքով զինադադարի ռեժիմի բազմակի խախտումների եւ ադրբեջանական զինուժի կողմից սադրիչ-դիվերսիոն գործողությունների կտրուկ աճին, ինչը մարդկային զոհերի պատճառ դարձավ, այդ թվում՝ խաղաղ բնակչության շրջանում», - նշեց ՄԱԿ-ում ՀՀ մշտական ներկայացուցիչը:

Չոհրաբ Մնացականյանը ներկաների ուշադրությունը հրավիրեց վերջին շաբաթների ընթացքում Իրաքի հյուսիսում «Իսլամական պետության» զինյալների կողմից Իրաքի էթնիկ փոքրամասնություններից մեկի՝ եզդիների զանգվածային սպանությունների հիմնախնդրի վրա: Նա նշեց, որ հարյուր հազարավոր մարդիկ՝ այդ թվում, եզդիներ, ասորիներ եւ հայեր ծայրահեղականների գործողությունների հետեւանքով ստիպված են լքել իրենց բնակավայրերը՝ տեղեկացնելով, որ Հայաստանը որոշում է կայացրել՝ ՄԱԿ-ի միջոցով օգնություն առաքել եզդի համայնքին:

«Մենք ակնատես ենք լինում սոսկալի մի իրավիճակի, որը պետք է կարգավորվի զանգվածային ոճրագործությունների կանխարգելմանն ուղղված համատեղ ջանքերով: Միջազգային հանրությունը պետք է գործի անհապաղ, եւ այն պետք է իրականացվի ՄԱԿ-ի կառույցների անմիջական ներգրավմամբ: Այս համատեքստում գլխավոր քարտուղարի Ցեղասպանության հարցով հատուկ խորհրդականի դերն անզանահատելի է: Հայաստանը կոչ է անում Անվտանգության խորհրդին անհապաղ արձագանքել եզդի ազգաբնակչության ողբերգական իրավիճակին», - եզրափակեց իր խոսքը ՀՀ դեսպանը:

Հայաստանում 540 ՄՎտ հզորության գազային էլեկտրակայան կկառուցվի

Հայաստանի էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությունում օգոստոսի 22-ին ՀՀ կառավարության եւ «Անակլիա Այ Ի Փի Հոլդինգ» ՄՊԸ-ի միջև ստորագրվեց «Հայաստանի Հանրապետության տարածքում 540 ՄՎտ հզորության գազային էլեկտրակայանի (2x270ՄՎտ) կառուցման եւ շահագործման վերաբերյալ» համաձայնագրի հիմնադրությունը:



Նախագծի իրականացման նպատակով «Անակլիա Այ Ի Փի Հոլդինգ» ՄՊԸ –ն կներդնի շուրջ 600 մլն ԱՄՆ դոլար: Կայանում տեղադրվելու են «Ջեներալ Էլեկտրիկ» ընկերության արտադրության գազատուրբիններ:

ՀՀ կառավարությունը կաջակցի մի շարք հարցերում, ինչպիսիք են՝ գազի երաշխավորված ծավալների մատակարարումը, անհրաժեշտ թույլտվությունների տրամադրումը, էլեկտրակայանի եւ հարակից ենթակառուցվածքների կառուցման նպատակով համապատասխան հողատարածքների հատկացման հարցում աջակցություն, գործող օրենսդրության շրջանակներում իր ներդրումների երաշխավորված պաշտպանվածությունը, հարկազատումը եւ կոմունալ միացումները, այդ թվում բարձրավոլտ էլեկտրական գծերից դրանց թողունակության շրջանակներում օգտվելու եւ էլեկտրաէներգիայի արտահանման ոչ խտրական իրավունքների տրամադրումը:

Գազային էլեկտրակայանի կառուցումը կնպաստի Հայաստանի Հանրապետության էներգետիկ անվտանգության բարձրացմանը եւ կենսունակության ապահովմանը, արտադրական հզորությունների զարգացմանը, ինչպես նաև էլեկտրաէներգիայի արտահանման ծավալների աճին:

Շարունակվում են «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարական աշխատանքները

Հայաստանի տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգլարյանի անմիջական հսկողությամբ «Հյուսիս-հարավ» ավտոմայրուղու Տրանշ 1-ի՝ Երեւան-Արտաշատ (հատված 2), Երեւան-Աշտարակ (հատված 3) եւ Տրանշ 2-ի՝ Աշտարակ-Թալին (հատված 1) ճանապարհահատվածներում ամռան ամիսներին ինտենսիվ կերպով շարունակվում են շինարարական աշխատանքները:

ՀՀ տրանսպորտի եւ կապի նախարարության լրատվական ծառայությունից հայտնում են, թե Տրանշ 1-ի Երեւան-Արտաշատ ճանապարհահատվածում, որտեղ արդեն ավարտվել է ձախակողմյան մոտ 19.5 կմ երկարությամբ հատվածի բետոնապատումը, կատարվում է կարայցում, ջրահեռացման համակարգերի տեղադրում, կամրջային կառույցների հատվածներում՝ ասֆալտապատում:

Բետոնապատման աշխատանքներ են իրականացվում ճանապարհի աջ կողմում. այստեղ մոտ 2,7 կմ հատվածն արդեն բետոնապատ է:

Շոգ եղանակի պատճառով այս հատվածում կատարվել է աշխատանքային գրաֆիկի փոփոխություն՝ կեսօրին աշխատելու փոխարեն աշխատանքներն ընթանում են երեկոյան եւ գիշերային ժամերին:

«Ն տրանսպորտի եւ կապի նախարար Գագիկ Բեգարյանը բազմիցս նշել է, որ Հայաստանի համար պետական նշանակություն ունեցող այս ճանապարհի կառուցման համար կարեւորագույն խնդիր է բարձր որակի ապահովումը:

Տրանշ 1-ի Երեւան-Արտաշատ ճանապարհահատվածում նախատեսվում է բետոնապատման աշխատանքներն ամբողջությամբ ավարտել հոկտեմբերի երկրորդ կեսին:

Տրանշ 1-ի Երեւան-Աշտարակ ճանապարհահատվածի աջակողմյան մասում կատարվել է մոտ 10,4կմ, իսկ ձախակողմյան մասում՝ մոտ 3.0 կմ բետոնապատում:

Այստեղ աշխատանքների ավարտը նախանշված է հոկտեմբերի առաջին կեսին: Տրանշ 2-ի Աշտարակ-Թալին ճանապարհահատվածում իրականացվում են հողային աշխատանքներ (հանույթ, լիցք, պայթեցում), հնագիտական պեղումներ եւ հողօտարումներ:

Հայաստանի հյուսիսային հատվածի բնակլիմայական պայմանները հաշվի առնելով՝ Տրանշ 2-ի Աշտարակ-Թալին ճանապարհահատվածի 55-րդ կիլոմետրում, ճանապարհի տակ տեղադրվում են ջրթող խողովակներ, որոնց միջոցով անձրեւաջրերն ու ձնհալոցքները կհեռացվեն՝ չվնասելով ճանապարհը:

Ճանապարհաշինական աշխատանքներին զուգահեռ առաջիկայում կվերանորոգվեն ու կվերականգնվեն նաեւ այս հատվածներում տեղակայված կամրջային կառույցները:

Թայվանական D-Link ընկերությունը նոր գրասենյակ է բացել Հայաստանում



Օգոստոսի 22-ին թայվանական «D-Link» ընկերությունը հանդիսավորությամբ նոր գրասենյակ է բացել Երեւանում: Բացմանը մասնակցել են Հայաստանի Էկոնոմիկայի փոխնախարարներ Գարեգին Մելքոնյանն ու Էմիլ Տարասյանը, ինչպես նաեւ «D-Link»-ի փոխնախագահ Վլադիմիր Լիպինգը:

1986 թվականին ստեղծված ընկերությունը հեռահաղորդակցության ցանցեր ու սարքավորումներ է մշակում եւ արտադրում: Գործում են ընկերության 127 մասնաճյուղեր ավելի քան 100 երկրներում:

Հայաստանում «D-Link»-ը գործունեությունը սկսել է Գյումրիում: 2012 թվականին ընկերությունը Կառավարության հետ հուշագիր է ստորագրել երկարատեւ համագործակցության մասին՝ նպատակ ունենալով Գյումրիում հետազոտությունների եւ փորձարարական կենտրոն ստեղծել: Այդ նպատակով ընկերությունը 8.5 մլն դոլար է ներդնելու:

Ներկայում D-Link-ը 12 աշխատակից ունի, մինչեւ 2015 թվականի մարտի վերջը նրանց թիվը պետք է հասնի 25-ի, եւս կես տարի անց՝ արդեն 40-ի:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը դատապարտել է Իրաքի եզդիների հանդեպ բռնությունները



Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը գորակցության գիր է հղել համայն եզդիների հոգևոր առաջնորդ Նորին Սուրբ Մեծություն Միլեն-Միրա Թահսիմ Բեգին, որը վերջինիս փոխանցվել է Իրաքի հայոց թեմի առաջնորդ Տ. Ավագ արքեպիսկոպոս Ասատուրյանի միջոցով:

«Համայն հայության հոգևոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր ցավակցություններն ենք հղում Ձեզ այս օրերին Իրաքում եզդի ազգաբնակչության նկատմամբ տեղի ունեցող զանգվածային կոտորածների կապակցությամբ: Մենք խորապես անհանգստացած ենք Իրաքի հյուսիսային շրջաններում իրականացվող անմարդկային բռնությունների եւ դրանց հետեւանքով բազմաթիվ զոհերի առնչությամբ», - ասված է Վեհափառ Հայրապետի գրության մեջ:

Խստորեն դատապարտելով եզդի ժողովրդի դեմ իրագործվող ջարդերն ու բռնությունները՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն է հայտնել, որ բազմադարյա պատմություն ունեցող եզդի ժողովուրդը կտոկա եւ կհաղթահարի իր առջեւ ծառայած այս փորձությունը: Նորին Սրբությունը նաեւ կոչ է արել միջազգային հանրությանն ու կազմակերպություններին անհապաղ քայլեր ձեռնարկել դադարեցնելու համար եզդիների ջարդերը Իրաքում:

Ամենայն Հայոց Կաթողիկոսը մաղթել է, որպեսզի վերահաստատվի խաղաղությունը Իրաքում եւ Իրաքի աստվածասեր ժողովուրդը շարունակի իր խաղաղ կյանքը հայրենի օջախներում:

Ցեղասպանության ճանաչումը նաեւ թուրք ժողովրդի խնդիրն է. կանադացի պատգամավորներ

Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը ոչ միայն Թուրքիայի իշխանությունների խնդիրն է, այլև թուրք ժողովրդի: Այս մասին այսօր՝ օգոստոսի 26-ին, Հայաստանի ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանի հետ հանդիպման ժամանակ հայտարարել են Կանադացի պատգամավորները:

Հայաստանի ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանն ընդունել է Կանադայի Համադաշնության խորհրդարանական պատվիրակությանը, որի կազմում էին պատգամավորներ Բրեդ Բաթթ, Լեոն Բենուան, Ռաս

Հյուրերտը եւ Մեկ ազատ աշխարհ՝ ՀԿ-ի նախագահ Մաջիդ Էլ Շաֆին, ՀԿ անդամներ Սամուել Պլետտը եւ Հանի Պողոսյանը:



«Հ ՀԿ նախագահ Գալուստ Սահակյանը, ողջունելով հյուրերին Ազգային ժողովում, կարեւորեց Հայաստանի եւ Կանադայի միջեւ քաղաքական երկխոսությունը եւ երկկողմ հարաբերությունների հետագա զարգացումը: ՀՀ ՀԿ նախագահի խոսքով՝ երկու երկրներն ունեն համագործակցության բարի ավանդույթներ, եւ Հայաստանը մեծ նշանակություն է տալիս միջխորհրդարանական կապերի խորացմանը:

Գալուստ Սահակյանը միջխորհրդարանական կապերի զարգացման գործում կարեւորեց բարեկամական խմբերի աշխատանքը եւ նշեց, որ ՀՀ Ազգային ժողովում կա Հայաստան-Կանադա բարեկամության պատգամավորական խումբ:

Ազգային ժողովի նախագահը բարձր գնահատեց հայ եւ կանադացի խորհրդարանականների արդյունավետ համագործակցությունը ՄԱԿ-ում, Ֆրանկոֆոնիայի խորհրդարանական վեհաժողովում եւ այլ հեղինակավոր միջազգային կառույցներում:

Անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հիմնահարցին՝ ՀՀ ՀԿ նախագահ Գալուստ Սահակյանը նշեց, որ Հայաստանը հետամուտ է խնդրի կարգավորմանը միայն խաղաղ ճանապարհով եւ բարձր է գնահատում Կանադայի հավասարակշռված դիրքորոշումը ԼՂ հակամարտության կարգավորման հարցում:

Պարոն Սահակյանը նշեց, որ 2015 թ.-ին լրանում է Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցը, եւ անդրադառնալով մարդկության դեմ հանցագործությունների դատապարտմանը՝ բարձր գնահատեց Կանադայի դերակատարությունը Հայոց ցեղասպանության ճանաչման գործում:

«ՀՀ ՀԿ նախագահը հյուրերին հրավիրեց մասնակցելու 2015 թ.-ի ապրիլին Երեւանում կազմակերպվելիք «խորհրդարանականներն ընդդեմ ցեղասպանության» խորագրով միջազգային համաժողովին:

Պատվիրակության անդամները շնորհակալություն հայտնեցին ընդունելության համար եւ նշեցին, որ առավտյան այցելել են Հայոց ցեղասպանության հուշահամալիր եւ ծանոթանալով թանգարանի ցուցանմուշներին՝ իրովին զգացել են հայ ժողովրդի ցավը: Նրանք սիրով ընդունեցին ՀՀ ՀԿ նախագահի՝ միջազգային համաժողովին մասնակցելու հրավերը:

Հանդիպման մասնակիցները քննարկեցին երկկողմ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր եւս:

Արցախ

Արցախի ՊՆ.

Հզորության հասցեն մարտադաշան է



Կարելի է տարբեր լրատվամիջոցների էջերում կամ լսարաններում անընդհատ բարձրաձայնել սեփական, այսպես կոչված հաջողությունների մասին, բերել հակառակորդին պատճառած կորուստների վերաբերյալ՝ փաստերով չհիմնավորված թվական տվյալներ, գովերգել այն բանակը, որն անընդունակ է կատարել իր առջեւ դրված ամենատրամադրական խնդիրն անգամ եւ, այդ ամենով հանդերձ հետապնդել սոսկ մեկ նպատակ՝ սեփական հասարակությանը համոզել այն ամենի մեջ, ինչ-որ ընդհանրապես գոյություն չունի... Սա է Ադրբեջանի ազիտայրոպի գործելաճոր, որի հիմքում ընկած է սուտը, չարախոսությունը, սեփական անճարակությունը երեւակայության ուժով քողարկելու մոլուցք: Այդ մասին ասվում է Արցախի պաշտպանության նախարարության տարածած հայտարարության մեջ:

«Նույն դեպքի շուրջ կարող են խոսել քաղաքագետն ու ռազմական փորձագետը, լրագրողն ու քաղաքացին եւ նրանցից ամեն մեկն՝ առանց փաստերի ու խղճի խայթի կնեղկայացնի այն, ինչ-որ կհամարի իրենց ձեռնտու կամ քիմքին հարիր...»

Որ այս ամենն արվում է նշվածների կողմից, էլի հասկանալի է՝ կասեն քարոզչություն է...»

Մինչդեռ երբ նույն տրամաբանությամբ են գործում տվյալ երկրի գերագույն գլխավոր հրամանատարը, պաշտպանության նախարարը, ազգային հերոս կոչված վայ գեներալներն ու դրանց ենթակամները՝ մեզ համար զավեշտալի, իսկ այդ երկրի համար պիտի որ ողբերգություն լինի... Դա ողբերգություն է, քանի որ ստելով սեփական ժողովրդին հանգստացնելը չէի ասի, որ ամենահաջողված տարբերակն է... Հակամարտության գոտում իր իսկ կողմից ստորած նախահարձակ գործողություններում խայտառակաբար պարտվել, բայց հանդես գալ հաղթողի կեցվածքով՝ ամենաքիչը ինքնախաբեություն է...»

Ինքնախաբեություն է, երբ արժանապատվության փոխարեն ընտրում ես ստորությունը, երբ մարտադաշտում կրած պարտությանը մուռը հանելու համար պատրաստ ես դիմելու վայրենիության հասնող եւ բանականության սահմաններում որեւէ կերպ չտեղավորվող անմարդկային քայլերի... Ասենք այնպիսին, ինչպիսինն այսօր էր, երբ թուրքի գյուղում հայտնված մոլորյալ հայ քաղաքացի Կարեն Պետրոսյանին ներկայացնելով որպես դիվերսանտ /նրան բռնել եւ զինվորականներին էր հանձնել թուրք գյուղացին, որից Կարենը թեյ եւ ծխախոտ էր խնդրել/՝ Ադրբեջանի 3-րդ

բանակային կորպուսի հրամանատարի առանձնատեսչակում՝ ծնկաչոք վիճակում նվաստացրին, իսկ այնուհետև սպանեցին...

Եվ դա արվեց Ադրբեջանի ազգային հերոս հորջորջված «զեներայ» Ռուվան Ակաբերովի հրամանով ու անմիջական մասնակցությամբ... Այն «զեներայի», ով ընդամենը օրեր առաջ քարոզամիջոցներով ստում էր, թե վերջին օրերին դարաբաղա-ադրբեջանական հակամարտ գործերի շփման գծում տեղի ունեցած ընդհարումների ժամանակ իբր սպանվել է 71 հայ զինվոր, իսկ այնուհետև շրջանառության մեջ դրեց Թովուզի ուղղությամբ 4 հայ դիվերսանտ ոչնչացնելու մասին մտացածին ապատեղեկատվությունը...

Այսբանից հետո հարց է առաջանում՝ ու՞մ հետ մենք գործ ունենք՝ բանակի, թե մոայլ միջնադարի հովերով տարված նախիրի, որը նախընտրում է ոչ թե մարտադաշտը, այլև քնածին կացնահարելու կամ մոլորյալ անպաշտպանին «հերոսաբար» սպանելու ճիվաղ կեցվածքը: Հետո էլ ասում են՝ մենք հզոր ենք...»:

Ադրբեջանում խուճապ է, Ռուսաստանն էլ խառնվել է իրար

ՍԻՐԱՆՈՒՅԵ ՊԱՊՅԱՆ, Հարցազրուցավար
Հարցազրույց - 06 Օգոստոսի 2014



Մեր զրուցակիցն է Արցախի հերոս, զեներալ-մայոր Արկաղի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս)

Պարոն Տեր-Թադևոսյան, այս պահին ԼՂՀ-ում եք: Վերջին երկու օրերին համեմատաբար դադար է: Արդյոք նախապատերազմյան իրավիճակ է, թե ոչ:

Ամեն ինչ նորմալ է: Ոչ մի պատրաստում էլ չի լինելու, Ադրբեջանի ղեկավարությունը հո հիմար չէ, նավթադոլարներով լավ ապրում է, ինչո՞ւ պիտի գրկվի այդ փողերից: Իսկ Ադրբեջանի ժողովուրդը տառապում է:

Իսկ ո՞ւմ էր ձեռնառու իրավիճակի լարումը:

Սկզբունքորեն երեք պատճառ կա. նախ՝ ամեն տարի այս շրջանում մի փոքր լարվում է վիճակը, երկրորդ՝ Ադրբեջանի պաշտպանության նոր նախարարն ուզում է ցույց տալ, որ ինքը Հայաստանին վախեցնելու նոր մարտավարություն ունի, և երրորդ՝ Հայաստանի ու Ադրբեջանի նախագահների հանդիպումն է Մոսկովում: Բայց ամենակարևորն այն է, որ այս ամենի արդյունքում թեև Հայաստանում իրավիճակը վատացավ, բայց նրանց մոտ էլ ավել վատ է վիճակը: Նրանք

հեռուստատեսությամբ ցույց են տվել, թե ինչպես են 14 զինվորականների թաղում, շոու են սարքում, ասում, որ Հայաստանը խախտում է հրադադարի ռեժիմը: Բայց նման բաներ ցույց տալով փաստացի Ադրբեջանում խուճապ ավելի մեծ է: Հայաստանում ես մի փոքր խուճապ կա, բայց Աստված տա, այն նվազի, որովհետև այստեղ իրավիճակը նորմալ է և վերահսկվում է:

Իհարկե, այս ամենը հրահրում է Ադրբեջանի ղեկավարությունը: Նրանք մտածում են, որ կվախեցնեն մեզ, բայց արդյունքում հենց իրենք են հիմա վախեցած: Նրանք փորձեցին հատել սահմանը, դիվերսիաներ կազմակերպել և 14 զինվոր կորցրեցին: Հիմա պարզ է, որ հնարավոր է լարվածությունն աճի, դրա համար հայկական կողմը պետք է պատրաստ լինի: Մոչիում Հայաստանի ու Ադրբեջանի նախագահներն էլ պետք է համաձայնության գան, որ գոհեր չլինեն սահմանին:

Այսինքն՝ կարելի՞ է ասել, որ առաջնագծում մեր բանակի պատրաստվածությունը բարձր մակարդակի է:

Մեզ պաշտպանում է նաև լեռնային տարածքը, սարերը մեզ օգնում են, դրա շնորհիվ պաշտպանվածությունը մեծանում է: Հայկական կողմը առաջ չի գնում, ադրբեջանցիք են առաջ գալիս, և այդ դեպքում մեր դիրքերն ավելի լավն են: Դրա համար էլ նրանք շատ գոհեր կունենան: Սահմանը հատում են հատուկ պատրաստված զինծառայողներ ու սպանվում սահմանին:

Իսկ Մոսկի հանդիպումից հետո ի՞նչ կլինի: Հնարավոր է դադարեն կրակոցները կամ նվազեն:

Տեսնենք, ես չգիտեմ, Ադրբեջանը կհամաձայնի՞ թուլացնել լարվածությունը: Առայժմ այդ կրակոցներն Ադրբեջանի օգտին չեն:

Ընդհանուր առմամբ, Ղարաբաղում մարդկանց մոտ խուճապ կա՞:

Բոլորովին չկա: Նորմալ իրավիճակ է, մարդիկ այստեղ սովորել են այս վիճակին: Նրանք գիտեն, որ այսօր շատ կարող է կրակեն, վաղը ավելի քիչ: Այստեղ ինձ հետ են ԵՊՀ-ից 80 ուսանողներ, այդ թվում՝ Ժուռնալիստիկայի ֆակուլտետից, որոնք երկու օր առաջ Շուշիում էին, հետո այցելել են Ասկերանի շրջան: Նրանք հանդիպում են բանակի զինվորների, սպաների հետ, իրենց աչքերով տեսնեն ամեն բան: Նրանց անընդհատ Երևանից գանգահարում հարցնում են՝ ով է կրակում, որտեղ են կրակում և այլն: Ուսանողները զարմանում են, թե ինչպես կարելի է նման հարցեր տալ: Կրակում են միայն առաջնագծում, որտեղ միշտ էլ կրակել են, վաղն էլ են կրակելու: Ադրբեջանում, օրինակ, տագնապ կա:

Կարծիք կա, որ այդքան լայնամասշտաբ զենքերը, որ ձեռք բերեց Ադրբեջանը Ռուսաստանից, այդպես էլ չի կարողանում կիրառել, չի տիրապետում:

Որտե՞ղ կրակի... Նա իհարկե տիրապետում է իրավիճակին, նա կարող է, բայց նրան ոչ ոք հնարավորություն չի տալիս: Այդ հնարավորությունները չեն տալիս նրանք, ովքեր զենք և զինամթերք են վաճառում Ադրբեջանին: Դրանք պետություններ են, ովքեր ստիպված պետք է լինեն անջատել նավթը: Ասենք՝ ԱՄՆ-ն ու Եվրամիությունը իրենց ներդրած գումարները հետ վերցնեն, Ադրբեջանն էլ նավթ չունենա: Մինչև նրանք չանջատեն, հնարավորություն չեն տա կռվելու:

Ադրբեջանի արտաքին գործերի նախարարությունը հայտարարություն է տարածել, որ հայկական բանակը վերջին մի քանի օրերի ընթացքում հայ-ադրբեջանական սահմանին և գործերի շփման գծում խախտելով հրադադարի ռեժիմը, հարձակումներ է գործել ադրբեջանական բանակի դիրքերի վրա: Սա մի հայտարարություն է, որ մենք պետք է անեինք, ինչո՞ւ է ԱԳՆ-ն լռում:

Սա քաղաքական հարց է, ես քաղաքականությամբ չեմ զբաղվում:

Այս պահին այստեղ կամավորներ շատ ունենք, եկել են իրենց փորձը փոխանցելու, որպեսզի մեր զինվորները գոտեպնդվեն, հաղթահարեն վախերը, և ադրբեջանցիներին դա նույնպես անհանգստացնում է, որ փորձառու զինվորներ են իրենց դիմաց: Նրանց մոտ առաջին գծում զինվորներ են, ովքեր ընդհանրապես չեն ուզում կռվել: Եվս մեկ անգամ կրկնում եմ, ովքեր անցնում են սահմանը, հատուկ պատրաստված ջոկատներ են, հետ են շարվում:

Արդեն երկու օր է՝ լարվածությունը թուլանում է, Տա Աստված, որ մինչև շաբաթվա վերջ ամեն ինչ նորմալ լինի, որ քիչ կրակեն: Տեսնում ենք, որ Ռուսաստանը խառնվեց, նա զենք է վաճառում Ադրբեջանին, բայց իբր թե ուզում է, որ չկրակեն...

Արցախյան հարցը լուծելու համար պետք է հանրաքվե անցկացնել. Դավիթ Հակոբյան

Ժամանակն է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը ստեղծի իր դիվանագիտական հայեցակարգը: Այս մասին այսօր՝ օգոստոսի 14-ին, լրագրողների հետ հանդիպմանը ասաց Մարքսիստական կուսակցության նախագահ Դավիթ Հակոբյանը:

«Նազարբաևեի ասածն այն է, որ ժամանակն է՝ Հայաստանը զբաղվի իր գործով, իսկ Արցախը պետք է ինքը իր դիվանագիտական դոկտրինը ստեղծի», - ասաց Դավիթ Հակոբյանը:

Բանախոսի կարծիքով՝ Արցախյան հիմնահարցի շուրջ ծավալվող գործընթացները բանակցային գործընթացի առարկա լինել չեն կարող. «Մենք տալիք-առնելիք չունենք, այսինքն դումար խաղալ այդ տարածքների վրա անհնարին է, եւ դրված է ամեն ինչ կամ ոչինչ սկզբունքը»:



Արցախյան կոնֆլիկտի լուծման համար Մարքսիստական կուսակցության նախագահն առաջարկում է հանրաքվե անցկացնել:

«Այս կոնֆլիկտի լուծման միակ ելքը հանրաքվեն է: Չորս ինքնորոշման կարգավիճակ կարող է լինել՝ առաջինը Հայաստանին միանալ մարզի կարգավիճակով, ՀՀ-ին միանալ՝ որպես երկու միջազգային սուբյեկտների ֆեդերացիա, իրեն հայտարարել միջազգային իրավունքի անկախ սուբյեկտ եւ ազգային անվտանգության նկատառումներից ելնելով՝ մտնել Ռուսաստանի կազմի մեջ՝ ինքնուրույն պետական միավոր», - ասաց Դավիթ Հակոբյանը:

Ռազմական փորձագետ. Բարուն պետք է հասկանա՝ հայերն իրենց հողը ոչ մեկին չեն հանձնի



Ադրբեջանցիները պետք է հասկանան, որ հայերն իրենց հողերը չեն պատրաստվում որևէ մեկին հանձնել. Դա նրանց հողն է, ի տարբերություն նրանց, ում նետել են վերջիններիս դեմ: Այդ մասին այսօր՝ օգոստոսի 14-ին, մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց ԱԳՀ երկրների Կովկասի ինստիտուտի բաժնի վարիչ, ռազմական փորձագետ Վլադիմիր Եվսեևը:

Եվսեևը բարձր է գնահատել հայ Չինված ուժերի մարտունակությունը դարաբաղյան հակամարտության գոտում իրավիճակի վերջին սրացման ժամանակ: «Վերջին իրադարձությունները ցույց տվեցին, որ լավ է աշխատել նաև հայ Չինուժի հետախուզությունը եւ կայր: Ժամկետային ծառայության զինծառայողները անհայտ վայրում վերապատրաստված ադրբեջանական

զինծառայողների դեմ հերոսաբար մարտնչեցին: Ողջ հանրապետությունը արձագանքեց այդ սպառնալիքին. այնքան բարձր էր այդ մարդանց բարոյական ոգին, որն նրանք կարողացան դիմարդել աղբրեջանական կողմի աննախադեպ սադրանքներին», - նշեց Վլադիմիր Եվսենևը:

Եվսենևը նաև նշեց, որ ԼՂՀ պաշտպանության բանակի գործողությունները կատարելապես գրագետ էին:

Ի՞նչ Ղարաբաղ, կորցնում ենք Հայաստանը. Դավիթ Հակոբյան



Մոչիում նախագահների հանդիպումները ցույց տվեցին, որ մեր իշխանությունն այլևս ասելիք է և անելիք չունի, և տեղի է ունենում Երրորդ Հանրապետության քաղաքական վախճանը: Այս մասին այսօր՝ օգոստոսի 14-ին, լրագրողների հետ հանդիպմանն ասաց Մարքսիստական կուսակցության նախագահ Դավիթ Հակոբյանը:

«Ինչքա՞ն կարելի է դատարկահանությամբ խաբել սեփական ազգին և քրեական լեզվով ասած՝ «արոկ ատրիտ անել»: Ես սա կբերորշեմ հետևյալ կերպ՝ Արցախյան վիճակները և Երրորդ Հանրապետության քաղաքական վախճանը», - ասաց Դավիթ Հակոբյանը:

Դավիթ Հակոբյանի խոսքով՝ Մոչիի հանդիպումը Երրորդ Հանրապետության անվտանգության համար ոչինչ չտվեց և հանդիպումից հետո սահմանային գոտում եղած անդորրը ժամանակավոր է:

«Բանը հասել է նրան, որ տեղի է ունենում Երրորդ Հանրապետության վախճան, ռմբակոծում են Հայաստանի սահմանները, զոհեր ենք տալիս այստեղից, հայաթափ են լինում սահմանային շրջանները: Ի՞նչ Ղարաբաղ, կորցնում ենք Հայաստանը», - ասաց Դավիթ Հակոբյանը:

Անդրադառնալով ՀՀ նախագահի վերջին հարցազրույցին՝ Դավիթ Հակոբյանը Սերժ Սարգսյանին «վարչական շտրաֆ» հայտարարեց:

«Նայում եմ նախագահի ինտերվյուն. ի՞նչ է նշանակում օգտագործել թուրքական բառ՝ միտքը կառուցելու համար: Հանաք բառի համար նախագահին վարչական շտրաֆ եմ հայտարարում: Ի՞նչ հանաք, Աթաթուրքից էլ մեջբերում արա», - ասաց Դավիթ Հակոբյանը:

Բանախոսի կարծիքով՝ այժմ այնպիսի իրավիճակ է ստեղծվել, որ կարելի է խոսել Չորրորդ Հանրապետություն ունենալու մասին:

«Այսօր այն իրավիճակն է, որի մասին ես բազմիցս խոսել էի: Կեցցե Չորրորդ Հանրապետության ծնունդը, պետք է հույսը կապել չորրորդ նախագահի հետ», - ասաց Դավիթ Հակոբյանը:

Արցախի իշխանություններին կոչ են անում կապեր հաստատել Իրանի հետ



Արցախում գործող «Ազգային վերածնունդ» կուսակցությունը, լինելով ակտիվ արտաքին քաղաքականության կողմնակից և ունենալով հստակ տեսլական Արցախի արտաքին համագործակցության վերաբերյալ՝ մտահոգված է Արցախի հարեւան ամենամեծ երկրի՝ Իրանի Իսլամական Հանրապետության հետ մեր երկրի հարաբերությունների ցածր մակարդակից: Այդ մասին ասվում է կուսակցության տարածած հայտարարության մեջ:

«Իրանի Իսլամական Հանրապետությունն իրեն դրսևորել է որպես բարեկամ երկիր և միշտ պատրաստ է եղել տարբեր հարցերի շուրջ համագործակցության: Իրանի հետ ակտիվ հարաբերություններն Արցախի համար նոր հնարավորություններ են բացում տնտեսական, քաղաքական և մշակութային ոլորտներում՝ հաշվի առնելով նաև Իրանում առկա ակտիվ հայ համայնքը:

Իրանի հետ ակտիվ համագործակցությունն Արցախի համար նոր հնարավորություններ կստեղծի նաև աշխարհաքաղաքական վերջին զարգացումների ֆոնին:

«Ազգային վերածնունդ» կուսակցությունը կոչ է անում Արցախի իշխանություններին հրաժարվել վերջին տարիների որդեգրած պասիվ կեցվածքից և ավելի ակտիվ աշխատել հարեւան այս կարեւոր երկրի հետ, Թեհրանում բացել Արցախի մշտական ներկայացուցչություն և ուղղակի կապեր հաստատել Իրանի ղեկավարության, քաղաքական, տնտեսական և մշակութային էլիտաների հետ», - նշել են հայտարարության հեղինակները:

Եզդիները շնորհակալ են Արցախին՝ իր օգնությունն առաջարկելու համար

Իրաքյան Քուրդիստանի մայրաքաղաքից ոչ հեռու գտնվող Լալա Մուրանի սրբատեղիում 15 օր առաջ ստեղծվել է Եզդիների փրկության կոմիտե, որը զբաղվում է ցեղասպանությունից տուժած եզդիների հավաքագրմամբ, կորած եզդիների անուն ազգանունների արձանագրմամբ: Այս մասին այսօր՝ օգոստոսի 20-ին, լրագրողներին ասաց «Միդիա-Շանգայ» եզդիների ազգային միավորում ՀԿ խորհրդի նախագահ Ամո Շարոյանը:

«Մեր հոգեւոր սրբավայրում ստեղծվել է Եզդիների փրկության կոմիտե, որը ղեկավարում է մեր հոգեւոր առաջնորդի որդի Հազի Բեկը, դրա կազմում կան նաև

Հայաստանից բարերար Միրզա Խանոյանը, Ռուսաստանից եւ ամբողջ աշխարհից ընդամենը 13 մարդ, որոնք այս պահին հիմնականում զբաղվում են ինչպես հումանիտար օգնության կոորդինացման հարցերով, այնպես էլ Իրաքի եզդիաբնակ Շանգալ մարզի հետագա ճակատագրով»,- ասաց Ամո Շարոյանը:



«Մեր հոգևոր սրբավայրում ստեղծվել է Եզդիների փրկության կոմիտե, որը ղեկավարում է մեր հոգևոր առաջնորդի որդի Հազի Բեկը, դրա կազմում կան նաև Հայաստանից բարերար Միրզա Խանոյանը, Ռուսաստանից եւ ամբողջ աշխարհից ընդամենը 13 մարդ, որոնք այս պահին հիմնականում զբաղվում են ինչպես հումանիտար օգնության կոորդինացման հարցերով, այնպես էլ Իրաքի եզդիաբնակ Շանգալ մարզի հետագա ճակատագրով»,- ասաց Ամո Շարոյանը:

Նորաստեղծ Եզդիների փրկության կոմիտեի գլխավոր խնդիրը, ըստ «Միդիա-Շանգալ» Եզդիների ազգային միավորում ՀԿ խորհրդի փոխնախագահ Գյուրջիս Բոչոյանի, եզդի ժողովրդի հանդեպ տեղի ունեցող ցեղասպանությանը գերտերությունների ուշադրությունը հրավիրելն է. «Նաև սարերում գտնվող մեր եզդի եղբայրներին կփորձենք համոզել, քաջալերել, որ այս ամենից հետո նրանք վերադառնան իրենց պապական հայրենիք»:

Ամո Շարոյանի խոսքով՝ իրենց տվյալով այս պահին Իրաքի Շանգալ մարզում գտնված եւ անհայտ կորած եզդիների ընդհանուր թիվը հասնում է մոտ 10 հազարի: Նորաստեղծ կոմիտեում աշխատող փորձառու իրավաբանների օգնությամբ եզդիները ապագայում պատրաստվում են դիմել Հազազի քրեական դատարան՝ կատարվածը ցեղասպանություն որակելու եւ մեղավորներին պատժելու համար:

Ամո Շարոյանը նաև իր խորին երախտագիտությունը հայտնեց ԼՂՀ կառավարությանը, որը հայտարարել էր, որ պատրաստ է ապաստան տրամադրել եզդի փախստականներին:

«Երեկ ԼՂՀ արտաքին գործերի մամուլի խոսնակը հայտարարեց, որ պատրաստ են ընդունել եզդի ժողովրդի փախստականներին եւ ես հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը, քանի որ իրավունքի այդ սուբյեկտը, չնայած իր խնդիրներին, պատրաստ է օգնել եզդի ժողովրդին»,- ասաց նա:

Նշենք, որ տարբեր տեղեկությունների համաձայն՝ Հյուսիսային Իրաքի Շանգալ նահանգում մինչև հիմա սպանվել է ավելի քան 5 հազար մարդ, հազարավորներն էլ տեղահանվել են:

Արեւմտյան Հայաստան

«Նոր Չարթոնքը» դատի է տվել Էրդողանին՝ հայերին վիրավորելու համար



Ստամբուլահայերի կողմից ստեղծված «Նոր Չարթոնք» շարժումը դատապարտել է Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանի կողմից հայերի հասցեին արված վիրավորական արտահայտությունները:

«Նոր Չարթոնք» շարժման կայքում տեղադրված հայտարարության մեջ նշվել է. «Մենք՝ Թուրքիայի հայերս, մերժում ենք ընտրություններից առաջ լինել գործիք եւ ազգայնամոլական զգացմունքների թիրախում հայտնվել: Մենք շարունակելու ենք պաշտպանվել երեխայից մարդասպան սարքող եւ ռասիստական գաղափարախոսությունը կրողներից:

Էրդողանի հիշյալ ռասիստական արտահայտությունը ըստ Թուրքիայի քրեական օրենսգրքի 216-րդ հոդվածի հանցանք է: Մեր այս հայտարարությունով դատական հայց ենք ներկայացնում եւ պատասխանատուներին կոչ անում կատարել իրենց պարտականությունը»,-նշվել է «Նոր Չարթոնքի» հայտարարության մեջ:

Նշենք, որ Թուրքիայի վարչապետ, նախագահի թեկնածու Ռեջեփ Թայիփ Էրդողանը թուրքական Star TV եւ NTV հեռուստաընկերությունների համատեղ եթերում պատասխանելով հաղորդավարի հարցերին, անդրադարձել է նաև ժողովրդի կողմից քննարկվող իր արմատների հարցին: «Իմ արմատները Ռիզեից են: Ինձ ասում էին, թե վրացի եմ, ավելին, մեկը կանգնեց ավելի կեղտոտ բան ասաց՝ պնդելով, թե ես հայ եմ»,-ասել էր Ռեջեփ Թայիփ Էրդողանը: Էրդողանի այս խոսքերը մեծ արձագանքն են գտել թուրքական մամուլում եւ սոցկայքերում:

Հայտնի է դարձել Թուրքիայում հայերին պատկանող եկեղեցիների թիվը


Թուրքիայի փոխվարչապետ Էմրուլլահ Իշլերը հայտնել է, թե Թուրքիայի հիմնադրամների գլխավոր վարչության ենթակայություն տակ քանի ոչ մահմեդական հիմնադրամ եւ դրանց պատկանող եկեղեցիներ կան:

Թուրքական Anadolu գործակալության փոխանցմամբ՝ Թուրքիայի Ազգայնական շարժում կուսակցության պատգամավոր Օզջան Ենիշերի գրավոր հարցադրմանն ի պատասխան, Թուրքիայի փոխվարչապետ Էմրուլլահ Իշլերը հայտնել է, որ Թուրքիայում կա ոչ մուսուլմանական 166

համայնքային հիմնադրամ, որից 74-ը հունական են, 52-ը՝ հայկական եւ 18-ը՝ հրեական:

Փոխվարչապետի խոսքով՝ հունական հիմնադրամներին պատկանում է 115 եկեղեցի, հայկականին՝ 52 եւ հրեականին՝ 47 սինագոգ: Էմբուլյահ Իշլերը նշել է, թե եւս 17 այլ համայնքներին են պատկանում 42 եկեղեցի:

Թուրքիայում Բիթլիս քաղաքի փողոցներից մեկը անվանել են Վիլյամ Սարոյանի պատվին



Թուրքիայում Բիթլիս քաղաքի փողոցներից մեկը կանվանվի հայտնի ամերիկահայ գրող Վիլյամ Սարոյանի պատվին: Ինչպես գրում է «Nouvelles d'Arménie» թերթը, Բիթլիսի քաղաքապետը հաստատել է երկրի հարավ-արեւելքում գտնվող այդ պատմական քաղաքի 5 փողոցների անունների փոփոխությունները: Փողոցներից մեկը կկոչվի Վիլյամ Սարոյանի պատվին, որի նախնիները լքել են այդ բնակավայրը մինչեւ 1915թ.-ը:

Սարոյանը ծնվել է քալիֆորնիական Ֆրեզնո քաղաքում, սակայն պահպանել է իր ամուր կապերը նախնիների հետ: Նա Բիթլիս է այցելել 1964թ., ուստի 2014թ.-ը նշանավորում է այդ այցելության 50-ամյա տարելիցը: Վիլյամ Սարոյանի անունով կկոչվի քաղաքի Սապկոր թաղամասի գլխավոր փողոցը, որտեղ ապրելիս է եղել Սարոյանների ընտանիքը:

Փոխնախարար. Հարկավոր է մշակութային կապեր հաստատել թուրքացած հայերի հետ

Թուրքացած հայերի խնդիրը հայերի համար ռազմավարական նշանակություն ունի, եւ անհրաժեշտ է նրանց հետ մշակութային կապեր հաստատել՝ ապահովելով նրանց վերադարձն արմատներին: Այս մասին օգոստոսի 15-ի մամուլի ասուլիսում հայտարարել է ՀՀ սփյուռքի փոխնախարար Սերժ Սրապիոնյանը:

Ըստ նրա՝ «Արի տուն» ծրագիրը սկզբում քննադատության ենթարկվեց, սակայն իրականում տարիները ցույց տվեցին, որ դա ճիշտ մտածված ծրագիր է, քանի որ աստիճանաբար ավելանում են շփման ծավալները սփյուռքի եւ Հայաստանի 13-15-ամյա երեխաների միջև: «Սփյուռքի նախարարի նախաձեռնությամբ թուրքացված հայերի համագումար է հրավիրվել, եւ պարզվել է, որ կան բազմաթիվ ոգեւորվածներ, որոնք բազմիցս եղել են Արեւմտյան Հայաստանում եւ այնտեղ գտել մարդկանց,

որոնք խոստովանել են, որ հայ են. շատերը նույնիսկ քրիստոնեություն են պահպանել, սակայն վախեցել են այդ մասին խոսել: Եվ գաղափար է ծագել հայերի հրավիրել Թուրքիայի այն շրջաններից, որոնք ավելի ազատ են եղել թուրքական իշխանությունների ճնշումներից եւ բազմիցս դժգոհություն հայտնել իրենց ազգային իրավունքները ոտնահարելու համար», - ասել է Սերժ Սրապիոնյանը:



Դա պատմական Տիգրանակերտն է, հավելել է նա, որը ներկայումս անվանվում է Դիարբեքիր: «Անկեղծ ասած, մենք չէին հավատում, որ Դիարբեքիրից այսքան արձագանք կլինի: Մենք որոշեցինք վերացնել տարիքային սահմանափակումը, եւ թուրքացված հայերի շարքում այժմ կան նույնիսկ մինչեւ 78 տարեկան այցելուներ», - ընդգծել է սփյուռքի փոխնախարարը:

ASALA-ն գոյություն կունենա մինչեւ Հայոց հարցի արդարացի լուծումը



ASALA-ն գոյություն կունենա այնքան ժամանակ, քանի դեռ Հայոց հարցը չի հանվել օրակարգից: Այս մասին օգոստոսի 15-ի մամուլի ասուլիսում հայտարարել է Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ASALA) մարտիկ Մարտիրոս Ժամկոչյանը:

Իսկ կազմակերպության աշխուժության նվազումը Ժամկոչյանը բացատրել է նրանով, որ ներկայումս հայկական իշխանությունները բավական գործիքներ ունեն՝ ազգային խնդիրները բարձր մակարդակով լուծելու համար: «Մենք դադարեցրել ենք մեր գործունեությունը, սակայն չենք դադարեցրել գոյությունը: Եվ անհրաժեշտության դեպքում ինչպես նախկին մարտիկները, այնպես էլ նոր սերունդը

պատրաստ է աշխատել Հայաստանում եւ դրա սահմաններից դուրս», - նշել է Ժամկոչյանը:

Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի (ASALA) ստեղծվել էր 1975 թ.: Կազմակերպության գլխավոր նպատակն է եղել համաշխարհային հանրության ուշադրությունը սեւեռել Հայկական հարցի վրա եւ Թուրքիային ստիպել ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Դիարբեքիի հայերը պատրաստվում են Ցեղասպանության 100-ամյակի միջոցառումներին

2015թ. ընդամառ, Դիարբեքիի հայերը (Տիգրանակերտ, Արեւմտյան Հայաստան) արդեն սկսել են աշխատել Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների նախապատրաստման ուղղությամբ: Այս մասին օգոստոսի 15-ի մամուլի ասուլիսում հայտարարել է թուրքահայ Գաֆուր (Օվանես) Օհանյանը, ով Դիարբեքիից Հայաստան է ժամանել սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրի շրջանակում:

Գաֆուր Օհանյանի խոսքով՝ Դիարբեքիում Հայոց ցեղասպանության հետ կապված միջոցառումներ սկսել են կազմակերպվել երեք տարի առաջ:

«Առաջին անգամ երբ որոշեցինք նշել այդ օրը, շատ էինք վախենում, ուստի միջոցառումները կազմակերպեցինք թուրքական կազմակերպությունների հետ համատեղ: Ես նրանց առաջարկեցի իրենց մզկիթներում արդյո՞ղ հայերի համար: Մենք «Սուրբ Կիրակոս» եկեղեցի այցելելու, այնտեղ մամուլի ասուլիս անցկացնելու, մոմեր վառելու եւ ծաղիկներ խոնարհելու ցանկություն հայտնեցինք, բայց ճանապարհին ոստիկանները շրջապատեցին մեզ եւ ասացին, որ թույլտվություն ունեն: Մեր շարքերում կային քաղաքական գործիչներ Թուրքիայից. նրանք ասացին, որ մենք կարող ենք շարունակել ճանապարհը՝ չնայած դրան: Մակայն ես չցանկացա հետագա խնդիրներ, առաջարկեցի մամուլի ասուլիս անցկացնել հենց այնտեղ եւ մեզ մոտ եղած ծաղիկները նվիրել տեղի հայ կանանց», - պատմել է Գաֆուր Օհանյանը:

Նշենք, որ Գաֆուր Օհանյանը այն 50 թուրքացած հայերից է, որոնք մկրտվել են եւ 15 օր առաջ Հայաստան ժամանել ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրի շրջանակներում:

Թուրքիայում վերանորոգվում է Մարութա սարի գագաթի Սուրբ Աստվածածին եկեղեցին



Ներկայում Թուրքիայի տարածքում գտնվող Սասունի Մարութա (Մարաթուկ) լեռան գագաթին գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցու վերանորոգման աշխատանքները

համար Ստամբուլից հատուկ մասնագետների խումբ է ժամանել Սասուն:

Թուրքական Haberkita կայքի փոխանցմամբ՝ Սասունի հայերի միության ջանքերով Սասունի Մարութա սարի գագաթին գտնվող Սուրբ Աստվածածին եկեղեցում սկսվել են վերանորոգման աշխատանքները, որոնք սկզբնական փուլում ներառում են ռելիեֆային աշխատանքները, իսկ մեկ ամիս անց նախատեսվում է անցնել բուն վերանորոգմանը:

Սասունի հայերի միության նախագահ Ազիզ Դաղըն նշել է, թե ռելիեֆային աշխատանքներն իրականացվում են ժամանակակից տեխնիկական միջոցներով, իսկ եկեղեցու ամբողջական վերականգնման աշխատանքները նախատեսվում է ավարտել 2015 թվականի հուլիսին:

Նշենք, որ Մարութա սարը գտնվում է Արեւմտյան Հայաստանի Սասուն գավառում եւ եղել է սասունցիների սիրած եւ պաշտելի սարը, որը կոչվել է նաեւ Մարաթուկ:

Հայի ունեցվածքը յուրացրած թուրք ընտանիքը միլիարդատեր է դարձել

Թուրքիայում կան թեմաներ, որոնց վերաբերյալ կան չբարձրաձայնելու մասին չգրված օրենքներ: Այդ թեմաներից են Ցեղասպանությունից հետո հայերի ունեցվածքի թալանն ու յուրացումները:

NEWS.am-ն այս անգամ ներկայացնում է Թուրքիայի խոշորագույն հողիմուսներից մեկի սեփականատեր ընտանիքի պատմությունը, որն ըստ հարեւանների, մեծապես կապված է հայերի թողած հարստության յուրացման հետ:

Խոսքը Eren հողիմուսի սեփականատեր Էրենների ընտանիքի մասին է: Այս հողիմուսը կարելի է համարել Ռեֆեի Թայիփ Էրդողանի կողմից հովանավորվող հողիմուսներից մեկը: Հողիմուսի նախագահը Ահմեդ Էրենն է, ով բարձագույն կրթություն ստանալուց հետո 1970-ից իր ձեռքն է վերցրել ընտանիքին պատկանող բիզնեսները եւ զարգացրել դրանք:

Առաջին հայացքից թվում է, թե ամեն ինչ տրամաբանական է, սակայն այլ բան են խոսում Ահմեդ Էրենի ծննդավայրում Բիթլիսում: Ահմեդ Էրենի ընտանիքը Բիթլիսում ապրել է հայերից խլված տան մեջ: Այդ տունը նույն թաղամասում է գտնվում, որտեղ, որ ապրել է Վիլյամ Սարոյանի ընտանիքը:

Հարեւանները պնդում են, թե Էրենների ընտանիքն իր նախնական կապիտալը ձեռք է բերել հայերից խլված տան մեջ հայտնաբերված խոշոր հարստության շնորհիվ, այսինքն, Էրենների գործերը սկսեցին յավանալ, երբ հայտնաբերեցին հայերի թողած հարստությունները: Իսկ հարեւաններից մեկը նշել էր, որ ժամանակին հային պատկանած տան մեջից Էրենները բացի մեծ քանակությամբ ոսկի հայտնաբերելուց նաեւ արվեստի թանկարժեք գործեր են հայտնաբերել:

Էրեն հողիմուսի մեջ մտնում են Էներգետիկայի, տեքստիլի, հանքարդյունաբերության, թեթեւ արդյունաբերության, մեքենաշինության, խոշորաձավալ բեռնափոխադրումների ոլորտում գործունեություն ծավալող տասնյակ ընկերություններ: Բացի այդ, Էրեն հողիմուսը զբաղվում է համաշխարհային մի շարք ապրանքանիշներ Թուրքիայում եւ ԱՊՀ երկրներում ներկայացնելով: Էրեն հողիմուսի ընկերություններում աշխատում են 8 000-ից ավել մարդ:

Միջազգային

Արամ Համբարյան. Ղարաբաղի հարցով միջնորդները խախտում են կեղծ «չեզոքությունը»



Ամերիկացիներն ու եվրոպացիներն աստիճանաբար սկսում են հասկանալ, թե ով է իրականում մեղավոր, ով է խախտում հրադադարի ռեժիմը Ղարաբաղյան հակամարտության շփման գծում: Այդ մասին NEWS.am-ի թղթակցի հետ գրույցում պատմեց Ամերիկայի Հայ Դատի Գրասենյակի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը:

«Զգիտեմ, թե ինչի մասին է մտածում Իլհամ Ալիևը. նա բազմիցս հայտարարել է, որ մտադիր է պատերազմել, չգիտեմ, թե ինչի կհանգեցնեն նրա խոսքերը: Մենք հիասթափված ենք, որ ԱՄՆ-ն ու ԵԱՀԿ-ն պահպանում են կեղծ չեզոքությունը՝ կոչ անելով երկու կողմին վերջ տալ հրադադարի ռեժիմը: Մենք փորձում ենք փոխել այդ մոտեցումը, որպեսզի այն դեպքերում, երբ Ադրբեջանը խախտում է համաձայնությունները, նրանք հայտարարեն այդ մասին: Երբ նրանք դա չեն անում, Ադրբեջանը շարունակում է խախտել համաձայնությունը, դա վտանգավոր է»,- ընդգծել է Արամ Համբարյանը: Միաժամանակ նա վստահություն է հայտնել, որ կողմերը կարող են լուծել Ղարաբաղյան խնդիրը բանակցությունների շուրջ: «Միջնորդներն աստիճանաբար խախտում են «չեզոքությունը», ինչպես որ, օրինակ, տեղի ունեցավ Ադրբեջանում գերության մեջ Կարեն Պետրոսյանի մահվան դեպքում»,- եզրափակեց Արամ Համբարյանը:

Հիշեցնենք, որ Ֆրանսիայի, ԱՄՆ-ի և Ռուսաստանի արտգործնախարարությունները հանդես են եկել հայտարարություններով՝ անհանգստություն հայտնելով Կարեն Պետրոսյանի մահվան կապակցությամբ:

Հայաստանի Տավուշի մարզի Չինարի գյուղի բնակիչ Կարեն Պետրոսյանն օգոստոսի 7-ին գերի էր ընկել: Օգոստոսի 8-ին ադրբեջանական կողմը հաղորդագրություն տարածեց գերու մահվան մասին՝ «սրտային անբավարարության» հետեւանքով:

Հունաստանի խորհրդարանը կքննարկի ցեղասպանության հերքումը պատժող օրինագիծը

Հունաստանի խորհրդարանը օգոստոսի 26-ին կքննարկի ռափզմի կամ ռափզմի հողի վրա բռնության հրահրմանը մասնակից քաղաքական կուսակցությունների և ֆիզիկական անձանց համար խտտացվող պատժի մասին նոր օրինագիծը:

Օրինագծի դրույթների համաձայն՝ ռափզմը քարոզող կուսակցությունները կամ միավորումները 1-6 ամիս ժամկետով կզրկվեն ցանկացած տեսակի պետական ֆինանսավորումից: Արդարադատության նախարարը կարող է տուգանել ֆիզիկական անձանց՝ 10-100 հազար եվրո գումարի չափով: Ռախիստական գործողությունների մասնակից մարդկանց սպառնում է 3 ամսից մինչև 3 տարվա ազատազրկում, ինչպես նաև 5-20 հազար եվրո տուգանք:

Արդարադատության նախարարությունը հաշվի կառնի «Նոր ժողովրդավարություն» խմբակցության 38 պատգամավորների կողմից արտահայտած անհանգստությունը: Պատգամավորները վերջինիս նամակ են ուղղել եւ խնդրել, որ օրինագծում կոնկրետ նշվի Սեւ ծովի եւ Փոքր Ասիայի տարածաշրջաններում հույների, ինչպես նաև հայերի ու ասորիների ցեղասպանությունը:

Թուրք ազգայնականների առաջնորդը դատապարտել է Էրդողանի հակահայկական խոսքերը



Թուրքիայի վարչապետ, նախագահի թեկնածու Ռեջեփ Թայիփ Էրդողանի՝ հայերին հասցեին արված վիրավորական արտահայտության հետ կապված քննադատական հայտարարություն է տարածել «Ազգայնական շարժում» (MHP) կուսակցության փոխնախագահ Թուրքուլ Թյուրքեշը:

Թուրքական T24.com կայքի փոխանցմամբ՝ MHP-ի հիմնադիր Ալփարսլան Թյուրքեշի որդին՝ Թուրքուլ Թյուրքեշը քննադատել է հայ լինելը վատ բան համարող Թուրքիայի վարչապետ, նախագահի թեկնածու Ռեջեփ Թայիփ Էրդողանին:

«Այս անգամ պարոն Էրդողանի խորական վերաբերմունքի և ատելության գոհերը դարձան մեր հայ քաղաքացիները:

Մենք պարոն Էրդողանի համար 21-րդ դարից նորություններ ունենք: Հայ լինելը ոչ հանցանք, ոչ արատ, ոչ կեղտոտ բան, որ էլ ամոթ: Նրա կիրառած արտահայտությունը տեղավորվում է «ատելության հողի վրա հանցանք» հոդվածի մեջ:

Մենք դատապարտում ենք վարչապետի խորական վերաբերմունքը և մեր հայ քաղաքացիներին համերաշխության ուղերձ հղում», - նշվել է Թուրքուլ Թյուրքեշի հայտարարության մեջ:

Նշենք, որ Թուրքիայի վարչապետ, նախագահի թեկնածու Ռեջեփ Թայիփ Էրդողանը թուրքական Star TV և NTV հեռուստաընկերությունների համատեղ եթերում պատասխանելով հաղորդավարի հարցերին, անդրադարձել է նաև ժողովրդի կողմից քննարկվող իր արմատների հարցին: «Իմ արմատները Ռիզեից են: Ինձ ասում էին, թե

վրացի են, ավելին, մեկը կանգնեց ավելի կեղտոտ բան ասաց՝ պնդելով, թե ես հայ եմ», -ասել էր Ռեջեյի Թայիփ Էրդողանը: Էրդողանի այս խոսքերը մեծ արձագանքն են գտել թուրքական մամուլում եւ սոցկայքերում:

Թուրքիայի դեսպանատունը գնդակոծած Արթուր Միրզոյանի դեմ քրգործ են հարուցել

Մոսկվայի ոստիկանությունը խուլիգանության հոդվածով քրեական գործ է հարուցել օգոստոսի 18-ին Թուրքիայի դեսպանատան ուղղությամբ կրակած տղամարդու դեմ:

Ինչպես հաղորդվել էր, կրակողը 43-ամյա ազգությամբ հայ Արթուր Միրզոյանն է: Միրզոյանը իր դրդապատճառների մասին քննիչներին ոչինչ չի հաղորդել:

Հիշեցնենք, միջադեպը գրանցվել է այսօր՝ մոտ 08:20-ին: Թուրքիայի դեսպանատան շենքին մի տղամարդ է մոտեցել եւ որսորդական հրացանից կրակել է ճակատամասին: Կրակոցների արդյունքում ոչ ոք չի տուժել:

«Նորությունների ռուսական ծառայությունը» հաղորդում է, որ կրակոցներից հետո դեսպանատան մոտ Քուրդիստանի աջակցության ցույց է սկսվել:

Հռոմի պապը Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին պատարագ կմատուցի



Հռոմի պապ Ֆրանցիսկոսը 2015թ. ապրիլի 12-ին Սբ. Պետրոս տաճարում Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին պատվին պատարագ կմատուցի: Այդ մասին հաղորդել է Բունեսու-Այրեսի կարդինալ Մարիո Պոլլին օգոստոսի 17-ին հայ կաթողիկե եկեղեցում անցկացրած պատարագի ժամանակ:

«Հռոմի պապը պատասխանել է Ցեղասպանության ճանաչմանը նվիրված պատարագ անցկացնելու՝ մեկ տարի առաջ Ներսես Պետրոս 19-րդի կողմից ուղարկված Հայ կաթողիկե եկեղեցու հրավերին», - հայտարարել է եկեղեցու հովիվ Պաբլո Հակիմյանը՝ ի պատասխան Prensa Armenia գործակալության հարցին:

Գործակալության փոխանցմամբ, անցած տարվա հունիսին Ներսես Պետրոս 19-րդ պատրիարքի հետ հանդիպման ժամանակ Հռոմի պապն ընդունել էր նաև Հայոց ցեղասպանությունը վերապրած մարդու աղջկան: Պապը լսել է աղջկան, վերցրել նրա ձեռքը եւ ասել. «Դա 20-րդ դարի առաջին ցեղասպանությունն էր»:

Չենայում «Հայերը Մադրասում» ցուցահանդեսը կընդգծի համայնքի դերը

Հնդկաստանի Մադրաս քաղաքի դատարանի շենքի դիմաց՝ Հայկական փողոցի առևտրային շինությունների միջև, տեղակայված է հայկական եկեղեցին: Այն Հնդկաստանի հնագույն եկեղեցիներից է, որտեղ կարելի է գտնել շուրջ 350 հայի գերեզման: Սակայն, Փարիզի հայ հետազոտողների ընկերակցության ուսումնասիրող եւ պատմաբան Մաթենիկ Բաթվազանի խոսքով՝ այս թիվը խամրում է այն անհամար հայերի թվի առաջ, որոնք երջանիկ ու բարեկեցիկ կյանք էին վայելում Մադրասում:



Հնդկաստանի «Deccan Chronicle» թերթը գրում է, որ Բաթվազանը ներկայումս Չենայ կոչվող քաղաքում է՝ այնտեղ հայկական եկեղեցու շենքում՝ «Հայերը Մադրասում» խորագրով ցուցադրություն կազմակերպելու համար՝ «Մադրասի շաբաթվա» շրջանակներում: «Այսօր բազմաթիվ հայ դպրոցականներ գիտեն Մադրասում հայերի ունեցած դերի մասին: Նրանք ցանկանում են իմանալ իրենց անցյալի մասին, եւ հատկապես Մադրասը զգալի դեր է խաղացել», - նշել է նա:

Ուսումնասիրելով հայերի տեղաշարժերը մինչև Չենայ՝ պատմաբանն ասել է. «Ի տարբերություն մյուս եվրոպացիների, ինչպիսիք են պորտուգալացիները, հոլանդացիները եւ ֆրանսիացիները, որոնք նույնպես եկել են 17-րդ եւ 18-րդ դարերի ընթացքում, հայերը հիմնականում առևտրական են եղել եւ ն գաղութատիրական մտադրություններ չեն ունեցել: Այդ պատճառով էլ տեղի բնակիչները նրանց լավ են վերաբերվել»:

Թուրքական երաժշտախումբը բեմում հայերեն երգեր է կատարել

Թուրքիայի Բողրում հանգստավայրում տեղի ունեցող երաժշտական միջոցառումներին մասնակցող «Քարդեշ թյուրքուլեր» երաժշտախումբը այքի է ընկել տարբեր լեզուներով ստեղծագործությունների կատարմամբ:

Թուրքական CNNturk-ի փոխանցմամբ՝ Բողրումի երաժշտական միջոցառումների շարքում առանձնացել է «Քարդեշ թյուրքուլեր» երաժշտախումբը, որի անդամները բեմում կատարել են ստեղծագործություններ հայերենով, քրդերենով, հունարենով, արաբերենով եւ թուրքերենով:

«Քարդեշ թյուրքուլեր» երաժշտախմբի համերգի ավարտին հանդիսատեսը երկար ժամանակ ոտքի վրա ծափահարել է խմբի անդամներին:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱԿ

ՄԵՎՐԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ

10 օգոստոսի 1920

Մեկ կողմից՝
 Բրիտանական կայսրությունը, Ֆրանսիան, Իտալիան և Ճապոնիան, որոնք սույն պայմանագրում նշված են որպես Գլխավոր դաշնակից տերություններ,
 Հայաստանը, Բելգիան, Հունաստանը, Հնչյալը, Լեհաստանը, Պորտուգալիան, Ռումինիան, Սերբա-Խորվաթա-Սլովենական պետությունը և Չեխոսլովակիան, որոնք վերոհիշյալ գլխավոր տերությունների հետ կազմավորում են դաշնակից տերություններ, և մյուս կողմից՝
 Թուրքիան, Նկատի առնելով, որ Օսմանական կայսերական կառավարության խնդրանքով գլխավոր դաշնակից տերությունները 1918թ. հոկտեմբերի 30-ին Թուրքիային տվել են զինադադար, որպեսզի հնարավոր դառնա Հաշտության պայմանագրի կնքումը:
 Նկատի առնելով որ դաշնակից տերությունները հավասար չափով են ցանկանում, որպեսզի հաստատուն և տեսական խաղաղությամբ փոխարինվի Թուրքիայի դեմ պատերազմը, որի մեջ նրանցից մի քանիսը հաջորդաբար ուղղակի կամ անուղղակի են ներգրավվել և որի սկզբնապատճառը եղել է 1914թ. հունիսի 28-ին նախկին Սերբիայի Կայսերական և Արքայական Ավստրո-Հունգարական կառավարության կողմից պատերազմի հայտարարումն ընդդեմ Թուրքիայի և 1914 թ. հոկտեմբերի 29-ին դաշնակից տերությունների դեմ Թուրքիայի սկսած և Թուրքիայի դաշնակից Գերմանիայի կողմից ղեկավարվող թշնամական գործողությունները:
 Այս նպատակով բարձր պայմանավորվող կողմերը որպես իրենց լիազորներ նշանակեցին՝
 Մեծ Բրիտանիայի, Իռլանդիայի և Անդրծովյան տիրապետությունների միացյալ թագավորության նորին մեծություն արքան, Հնդկաստանի կայսրը՝
 Վիկտորիայի շրջանի կոմանդոր, Փարիզում նորին բրիտանական մեծության լիազոր մինիստր սըր Ջորջ Դիքսոն Գրեեմսին, Եվ
 Կանադայի դոմինիոնի կողմից՝
 Միխայիլի և Գեորգիի շքանշանի կոմանդոր, Միացյալ թագավորությունում Կանադայի Գերագույն կոմիսար պատվարժան սեր Ջորջ Խոլսես Պեյլեին:
 Ավստրալիական Կոմանդովելսի կողմից՝
 Միացյալ թագավորությունում Ավստրալիայի Գերագույն կոմիսար հարգարժան պ-րն Էնդրյու Ֆիշերին:
 Նոր Չեխոսլովակիայի դոմինիոնի կողմից՝
 Բրիտանական Կայսրության շքանշանի ասպետ, Միացյալ թագավորությունում Հարավ-Աֆրիկական գերագույն կոմիսարի պարտականությունները կատարող պ-րն Ռեչինադ Էնդրյու Բյանկենբերգին:
 Հնդկաստանի կողմից՝
 Հնդկաստանի գործերի պետական քարտուղարի օգնականի սատարող սըր Արթուր Հիրցելին:
 Ֆրանսիական հանրապետության պրեզիդենտը՝
 Մինիստրների խորհրդի նախագահ, Արտաքին գործերի մինիստր Ալեքսանդր Միլերանին,
 Ֆինանսների մինիստր պ-րն Ֆրեդերիկ-Ֆրանսուա Մարսելին:
 Ֆրանսիայի դեսպան պ-րն Ժորժ Մորիս Պալեոլոգին:
 Իտալիայի Նորին մեծություն թագավորը՝
 Թագավորության սենատոր, Փարիզում Իտալիայի ն.մ. թագավորի լիազոր դեսպան կոմս Լեյոն Բոնին Լոնգարին:
 Բարձրագույն ռազմական խորհրդում իտալական զինվորական ներկայացուցիչ գեներալ Ջիովաննի Մարիետտին:
 Ճապոնիայի Նորին մեծության կայսրը՝
 Լոնդոնում Ճապոնիայի ն.մ. կայսրի արտակարգ և լիազոր դեսպան, վիկոնտ Շինդին:
 Փարիզում Ճապոնիայի ն.մ. կայսրի արտակարգ և լիազոր դեսպան պ-րն Կ. Մացուին:

Հայաստանը՝
 Հայկական Հանրապետության պատվիրակության նախագահ պ-րն Ավետիս Ահարոնյանին:
 Բելգիացիների Նորին մեծության թագավորը՝
 Արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր, պետական մինիստր պ-րն Ժյուլ Վան-դեն-Հեյվելին:
 Միջազգային անձնական իրավունքի ինստիտուտի անդամ, բելգիական պատվիրակության գլխավոր քարտուղար պ-րն Ռոլեն Ժեքմենին:
 Հելլենների Նորին մեծության թագավորը՝
 Մինիստրների խորհրդի նախագահ պ-րն Ելեֆթերիա Կ. Վենիզելոսին:
 Փարիզում հելլենների ն.մ. թագավորի արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր պ-րն Աթոս Ռոմանոսին:
 Հեռասի Նորին մեծության թագավորը՝
 Լեհական Հանրապետության պրեզիդենտը՝
 Փարիզում Լեհական Հանրապետության արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր կոմս Մավրիկի Չամոյսկուն:
 պ-րն Էրազմ Պիցին:
 Պորտուգալական Հանրապետության պրեզիդենտը՝
 Մինիստրների խորհրդի նախկին նախագահ դոկտոր Ալֆոնսո դը Կոստային:
 Ռումինիայի Նորին մեծության թագավորը՝
 Ֆինանսների մինիստր պ-րն Նիկոլայ Տիտուլեսկուն:
 Փարիզում Ռումինիայի ն.մ. թագավորի արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր իշխան Դմիտրի Գիկին:
 Սերբերի, խորվաթների և սլովենների նորին մեծության թագավորը՝
 Մինիստրների խորհրդի նախկին նախագահ պ-րն Նիկոլայ Պ. Պաշչին:
 Արտաքին գործերի մինիստր պ-րն Անտո Տրումբիչին:
 Չեխոսլովակյան Հանրապետության պրեզիդենտը՝
 Արտաքին գործերի մինիստր պ-րն Էդուարդ Բենեշին:
 Լոնդոնում Չեխոսլովակյան Հանրապետության արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր պ-րն Ստեֆան Օսուսկուն:
 Թուրքիան՝
 Սենատոր, գեներալ Հաադի փաշային:
 Սենատոր Ռիզա Թեֆիկ բեյին:
 Բեռնում Թուրքիայի արտակարգ դեսպանորդ և լիազոր մինիստր Ռեշադ Խալիսու բեյին,
 Որոնք, իրենց լիազորագրերը փոխանակելով, դրանք գտան անբասիր և պատշաճ ձևի ու համաձայնվեցին հետևյալ որոշումների շուրջ:
 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից կավարտվի պատերազմի վիճակը:
 Այդ պահից և սույն պայմանագրի որոշումների պահպանմամբ, դաշնակից տերությունների միջև գոյություն կունենան պաշտոնական հարաբերություններ:

Մասն 3-րդ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
Բաժին 6-րդ
ՀԱՅԱՍՏԱՆ

Հոդված 88. Թուրքիան հայտարարում է, որ ճանաչում է Հայաստանը, ինչպես այդ բանն արդեն արել են Դաշնակից տերությունները, որպես ազատ և անկախ պետություն:
Հոդված 89. Թուրքիան և Հայաստանը, ինչպես և Բարձր պայմանավորվող կողմերը, համաձայնվում են Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներում Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանատու մը թողնել Ամերիկայի Միացյալ Նահանգների որոշմանը և ընդունել ինչպես նրա որոշումը, նույնպես և այն բոլոր միջոցառումները, որոնք նա կարող է առաջարկել Հայաստանին դեպի ծով ելք տալու և հիշյալ սահմանագծին հարող օսմանյան բոլոր տերիտորիաների ապառազմականացման վերաբերյալ:
Հոդված 90. Այն դեպքում, եթե 89-րդ հոդվածի համաձայն սահմանագիծը որոշելիս վիլայեթների ամբողջ տերիտորիան կամ նրա մասը հանձնվի Հայաստանին, Թուրքիան այսօր արդեն հայտարարում է, որ որոշման օրից սկսած ինքը հրաժարվում է

հանձնված տերիտորիայի նկատմամբ բոլոր իրավունքներից եւ իրավահիմունքներից: Սույն պայմանագրի որոշումները, որոնք կիրառվելու են Թուրքիայից անջատվող տերիտորիաների նկատմամբ, այս պահից սկսած կգործադրվեն նաեւ այդ տերիտորիայի նկատմամբ:

Հայաստանի սուվերենությանը հանձնվող տերիտորիայի կապակցությամբ նրա վրա դրվող Թուրքիայի ֆինանսական պարտավորությունների բաժինը, եւ դրանց բնույթն ու այն իրավունքները, որոնցով նա կարող է փաստարկել, կսահմանվեն սույն Պայմանագրի 8-րդ մասի (ֆինանսական դրույթներ) 241-244-րդ հոդվածների համաձայն:

Հաջորդ կոնվենցիաները կկարգավորվեն, եթե դա անհրաժեշտ լինի, այն բոլոր հարցերը, որոնք չեն կարգավորվել սույն Պայմանագրով եւ որոնք կարող են ծնունդ առնել հիշյալ տերիտորիայի փոխանցման կապակցությամբ:

Հոդված 91. Եթե 89-րդ հոդվածում նշված տերիտորիայի մի մասը սահմանվի Հայաստանին, ապա Սահմանագծման հանձնաժողով, որի կազմը կորոշվի հետագայում կստեղծվի երեք ամսվա ընթացքում այն բանից հետո, երբ արդեն ընդունված կլինի Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ տեղում սահմանագիծ անցկացնելու վերաբերյալ հիշյալ հոդվածում նախատեսվող որոշումը:

Հոդված 92. Ադրբեջանի եւ Վրաստանի հետ Հայաստանի սահմաններն ըստ պատկանելույն կորոշվեն շահագրգռված պետությունների ընդհանուր համաձայնությամբ:

Երբ 89-րդ հոդվածում նախատեսված որոշումն արդեն ընդունված կլինի եւ դրանից հետո այս կամ այն շահագրգռված պետությունները չեն կարողանա ընդհանուր համաձայնությամբ որոշել իրենց սահմանագիծը, վերջինս կորոշեն Գլխավոր դաշնակից տերությունները, որոնք դրա հետ միասին պետք է հոգ տանեն սահմանագատումը տեղում գծանշելու մասին:

Հոդված 93. Հայաստանն ընդունում է, համաձայնվելով դրանք մտցնել Գլխավոր տերությունների հետ պայմանագրի մեջ, այն որոշումները, որոնք այդ Տերություններն անհրաժեշտ կհամարեն Հայաստանում այն բնակիչների շահերը պաշտպանելու համար, որոնք ռասայի, լեզվի եւ կրոնի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից:

Հայաստանը նմանապես համաձայնվում է Գլխավոր տերությունների հետ Պայմանագրի մեջ մտցնել այն որոշումները, որոնք այդ տերություններն անհրաժեշտ կհամարեն տրանզիտի ազատությունը եւ այլ ազգերի առեւտրի համար արդարացի պայմանակարգը պաշտպանելու համար:

Բաժին 12-րդ

ՔԱՂԱՔԱՑՅԻՈՒԹՅՈՒՆ

Հոդված 125. Տասնութից բարձր տարիք ունեցող այն անձինք, որոնք սույն Պայմանագրի համապատասխան բնակչություն են հաստատել Թուրքիայից անջատված տերիտորիայում, եւ որոնք ռասայի առումով տարբերվում են ազգաբնակչության մեծամասնությունից, սույն Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո միայն ժամանակամիջոցում կարող են քաղաքացիություն ընտրել հոգուտ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Հունաստանի, Հնչասի, Միջագետքի, Սիրիայի, Բուլղարիայի կամ Թուրքիայի, եթե այն պետության ազգաբնակչության մեծամասնությունը, որի օգտին կատարվում է քաղաքացիության ընտրությունը, պատկանում է նույն ռասային, ինչ եւ քաղաքացիության ընտրության իրավունքը կենսագործող անձը:

Մաս 4-րդ

ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 142. Նկատի առնելով, որ 1914 թվականի նոյեմբերի 1-ից հետո Թուրքիայում գոյություն ունեցող տեռորիստական ռեժիմի պատճառով չէին կարող նորմալ կարգով տեղի ունենալ քրիստոնյաների դավանափոխությունները, այդ ամսաթվից հետո կատարված դավանափոխությունները չեն ընդունվում, եւ այն բոլոր անձինք, ովքեր մինչև 1914 թվականի նոյեմբերի 1-ը չեն եղել մուսուլման, կդիտվեն որպես ոչ մուսուլմաններ, եթե միայն նրանք վերականգնելով իրենց ազատությունը, իրենց սեփական կամքով չեն կատարի այն բոլոր ձեռնարկությունները, որոնք անհրաժեշտ են իսլամն ընդունելու համար:

Պատերազմի ժամանակ Թուրքիայում մարդկանց նկատմամբ կատարված վայրագությունների պատճառած չարքին առավելագույն չափով քավելու համար օսմանյան կառավարությունը պարտավորվում է իր եւ օսմանյան իշխանությունների կողմից ցույց տալ ամեն տեսակ ջախկցություն՝ 1914թ. նոյեմբերի 1-ից հետո անհետացած, առեւանգված, ներկայված եւ ազատագրված ամեն ռասայի եւ ամեն կրոնի մարդկանց որոնելու եւ ազատելու համար:

Տուժվածների՝ իրենց, նրանց ընտանիքների եւ նրանց մերձավորների բողոքներն ընդունելու, անհրաժեշտ հետաքննություններ կատարելու եւ վերջնական ձեռով վերոհիշյալ անձանց ազատելու մասին որոշումներ հանելու գործում օսմանյան կառավարությունը պարտավորվում է դյուրացնել Ազգերի լիգայի խորհրդի կողմից նշանակվելիք խառն հանձնաժողովների գործողությունները:

Օսմանյան կառավարությունը պարտավորվում է հարկադրել, որ հարգվեն այդ հանձնաժողովների որոշումները եւ ապահովվեն այս ձեռով իրենց բոլոր իրավունքները վերականգնած անձանց անվտանգությունը եւ ազատությունը:

Հոդված 144. Օսմանյան կառավարությունը ընդունում է լքված սեփականության (Emval-i Metruce) վերաբերյալ 1915 թվականի օրենքի, ինչպես նաեւ այդ օրենքի լրացումների անհրաժեշտությունը, եւ հայտարարում է դրանք վերացված եւ ուժը կորցրած ինչպես անցյալում, նույնպես եւ ապագայում:

Օսմանյան կառավարությունը հանդիսավոր կերպով պարտավորվում է հնարավորության սահմաններում նպաստել, որպեսզի իրենց օջախները վերադառնան եւ իրենց գործերը վերսկսեն օսմանյան այլազգի այն քաղաքացիները, որոնք 1914թ. հունվարի 1-ից հետո գաղթել են զազանությունների հանդեպ ունեցած վախից դրդված, կամ արտաքսվել են բռնադատման որևէ այլ եղանակով:

Օսմանյան կառավարությունն ընդունում է, որ օսմանյան հիշյալ քաղաքացիներին կամ նրանց համայնքներին պատկանող այն անշարժ եւ շարժական գույքերը, որոնք կարող են որոնելով գտնվել, ուժ ձեռքում էլ դրանք լինեն, պետք է որքան հնարավոր է շուտ վերադարձվեն (իրենց տերերին): Գույքերը վերադարձվելիս ազատ են լինելու որևէ պարտիքներից եւ սերվիտուտներից, որոնցով նրանք կարող էին ծանրաբեռնված լինել, եւ վերադարձվեն առանց որևէ հատուցման այժմյան սեփականատերերին կամ գործածողներին, բայց այնպիսի հայցերի պայմանով, որոնք այս վերջինները կարող են հարուցել նրանց դեմ, ումից նրանք այդպիսիք ստացել են:

Օսմանյան կառավարությունը համաձայնվում է այն բանին, որպեսզի Ազգերի լիգայի խորհուրդը միջնորդ հանձնաժողովներ նշանակի բոլոր այն վայրերում, որտեղ դա կհամարվի անհրաժեշտ: Այդ հանձնաժողովներից յուրաքանչյուրը կազմված կլինի օսմանյան կառավարության մեկ ներկայացուցից, այն համայնքի մեկ ներկայացուցից, որն իրեն համարում է տուժված կամ որի անդամը իրեն համարում է տուժված, եւ Ազգերի լիգայի խորհրդի նշանակված նախագահից: Միջնորդ հանձնաժողովները կվարեն այն բոլոր հարցերը, որոնք նշված են սույն հոդվածում, եւ դրանք կլուծեն արագընթաց վարույթի կարգով:

Հիշյալ միջնորդ հանձնաժողովները օժտված կլինեն հետևյալ հրամանները տալու իշխանությամբ.

